


2625
2626
2627
2628
2629

2630
2631

84

8-85

1153



2011

ՏՐԻԼԵՒ

(ՏՐԱՄ 5 ԱՐԱՐ)



ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԳՐԱԾԱՆ

Կ. Պոյչս, Ճշղաղ Օղոր Եօզուցու, թի 7-9

ՓՈՅՉՍ ԳՐԱԾԱՆ
PAROS BOOK STORE
57 La Belle Ave., H. P.
Detroit Michigan

1922

ՏՐԱՄ 5 ԱՐԱՐ

ԳՈՐԾՍԴ ԱՆՁԻՆՔ

ՏՐԻԼԲԻ ՕՖԵՐԱԼ

ՄԻՄԻՇ
ԶՈՒԶՈՒ

Նկարիչներու համար իրեւ օրի-
նակ՝ ծառայող աղջիկներ՝ մօսկէ

ԲԻԼԻ

ՏԱՅԻ
ՄԱՆԹԻ

Նկարիչներ

ՍՎԵՆԳԱԼԻ

ԺԵԿՈ
ՑՐԱՆԿԵԼ
ԶԱՆԵԹԹԻ

Երաժիշտներ

ԼԵՅՏԻ ԲԷԴՈՏ

ԹՈՄԱՍ ԲԷԴՈՏ
ՔԵՐԵՎԻՆԱՐ

Բիլիի մայ րը եւ հօրեղբայրը
Պարտիզան



397
40

9

ՏՏԻ

63

10-5

Ա. ԱՐԱՐՈՒԱԾ

(Նկարիչներու աշխատանոց մը՝ Ակարներ, և Երկասուփեր,
արռոներ: Անկիւնը՝ գեղեցիկ դաշնակ մը, և ա.:

ՏԵՍԻԼ Ա.

ԶՈՒԶՈՒ, ՍԱՆԹԻ, ՏԱՅԻ

ԶՈՒԶՈՒ.—Պարոնա՛յք, մենք վազը Տոտոյի մօտ ենք
ճաշելու: Նա մեզ խոստացել է Վէրսայի գորտի սալաթ:

ՍԱՆԹԻ.—Հա՛, հա՛, հա... նրա համար ջղուտ Խա-
թիւտան գորտ էր որսում և վա՛յ է, եթէ այդ գորտերից
Սվէնգալիի սիկարին հոտն է բուրում... որովհետեւ Սվէն-
գալին այժմ Տրիլրիի համար գժւում է: Բայց այդ գերմա-
նական չհուտար մեծ տաղանդի տէր է:

ՏԱՅԻ.—Այո՛, նա հանձար է:

ԶՈՒԶՈՒ.—Այո՛, որքան նա հանձարեղ մարդ է, այն-
քան էլ անպիտան է: Ես կեանքումս Սվէնգալիի պէս ան-
սիրու մարդ չեմ տեսել, նա չար է, ինչպէս ինքը՝ սատանան:
Միթէ Տրիլրին նրան հաւանո՞ւմ է:

ՍԱՆԹԻ.—Ֆո՛ւ, ի՞նչ էք առում...: Տրիլրին յաւերժա-
հարսից առաքինի է դարձել, այն օրից, երբ Բիեռն
թողեց և մի լուացարարուհիի հետ սկսեց ապրել:

ՏԱՅԻ.—(Նայելով ժամացոյցին) Ժամը տասն է, ի՞նչո՞ւ
նա ուշացաւ... ժամանակ է:

ՍԱՆԹԻ.—Տրիլրին ընդօրինակում է Պէոնարի մօտ:

ՏԱՅԻ.—Ի՞նչն է ընդօրինակում:

ՍԱՆԹԻ.—Ոտները, նա նկարում է միջնադարեան լո-
ացող կին:

ՏԵՍԻԼ Բ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԲԻԼՀԻ

ԲԻԼՀԻ .— (Ճամապարհորդական հազուսթերով և սրյուսակով մտնելով:) ԿԵՐԳԵՇ Փարիզը:

ԱՄԵՆՔԻ .— (Վեր ցատկելով:) ԲԻԼԻՇՆ...

ԲԻԼՀԻ .— Ես եմ բարեկամներս, բարեւ ձեզ... լաւ խառնեցի ձեզ:

ԱԱՆԹԻ .— Մենք քեզ վազն էինք սպասում:

ԲԻԼՀԻ .— Ես գիտէի, բարեւ ձեզ, մատմուազէլ Միմիշ:
Խնչպէս էք, բարեկամներս: Օ՛ իմ սիրելի Փարիզ, ողջունում եմ քեզ, ի դիմաց այս հրաշալի Սպանուհուն:

ՏԱՖԻ .— Ինչպէս են ծնողներդ:

ԲԻԼՀԻ .— Ողջ և առողջ: Մօրս ծննդեան տարեդարձին օրը հրաշալի անցաւ: Ես համբուրեցի նրան եւ նա ինձ վերադարձուց ձեր գիրկը: ԿԵՐԳԵՇ մեր եռապետեան միութիւնը, կԵՐԳԵՇ մեր արհեստանոցը, կԵՐԳԵՇ Միմիշ:

ԱԱՆԹԻ .— Դու քաղցած ես:

ԲԻԼՀԻ .— Ես: Սանթի դու անարգում ես մեր հայրենիքը: Այս քանի օր է ես այնքան պուտիսնկ եմ կերեւ այնտեղ, որ ամբողջ մի ամիս չեմ քաղցանալ:

ՏԱՖԻ .— Մենք առանց քեզ տիրում էինք:

ԱԱՆԹԻ .— Այս', եւ եթէ Տրիլիքն չինէր:

ԲԻԼՀԻ .— Ի՞նչ Տրիլիք, այն որ հազուագիւտ ոտնե՞ր ունի:

ԱԱՆԹԻ .— Նա ինքը: Տափին նրանից նկարում է «արտասութիւ աղբիւր» պատկերը:

ԲԻԼՀԻ .— Տափին... ա՛յ դու դաւաճան: Իսկ քո «Փարիզի ջրախեղդ կանայք» պատկերը:

ՏԱՖԻ .— (ամացելով) Այդ պատկերին համար Տրիլիքն չափաղանց առոյգ է. աւելի լաւ է պառկիր հանգստացիր:

ԲԻԼՀԻ .— ԿԵՐԳԵՇ լատինական թաղի աղջիկները:

ՏԵՍԻԼ Գ. — ՆՈՅՆՔ ԵՒ ՏՐԻԼԲԻ

ՏՐԻԼԲԻ .— (Մտնում է գրանական զինուորի կես հագուստով, ձեռին կայ կողով մը եւ երկարէ կեռ մը:)

ԱՄԵՆՔԻ .— Ա՛... Տրիլիքն վերջապէ՛ս:

ՏՐԻԼԲԻ .— Ահա եւ եր: Ողջոյն մեր անգլիացիներին:

ԱԱՆԹԻ .— Է՛հ, ինչպէս էր, լաւ ուրախացար երէկ Մաթիլդայի յօս:

ՏՐԻԼԲԻ .— Սատանան տանի:

ԱԱՆԹԻ .— Ինչպէ՛ս է առողջութիւնդ:

ՏՐԻԼԲԻ .— Ոչի՞նչ, ապրում ենք (կողովը դժմ ձգելով:) Իսկ դու ինչպէ՛ս ես, (Զուզուին) Գոնդրան, իմ Զուզուիկ, ինչպէ՛ս ես թաշկոսում:

ՉՈՒՉՈՒԻ .— Ինչպէս ռետինը, սիրելիս, իսկ դու ցնցոտիի վաճառական ես դարձել:

ՏՐԻԼԲԻ .— Իսկ եւ իսկ բարեկամս: Բազդ չունեմ, բայց չէ որ պէտք է ապրել. (Ծկատելով Բիշիին) Օտար մա՞րդ: Դուք Բիլին է՞ք:

ԲԻԼՀԻ .— (Դիտելով նրան) Ես Բիլին եմ:

ՏՐԻԼ .— Պրավօ՛, ես չեմ սխալուեր: Տափին եւ Սանթին սիրահարուած են ձեր վրայ: Դուք ստիպեցիք նրանց մի ամբողջ շաբաթ տիրել: Դուք անգլիացի էք, աւելի լաւ, ես ձեզ հաւանում եմ: Ես Տրիլիք Օֆէրալն եմ, ծագումով անգլուհի, իսկ արհեստով՝ մօտէլ: Ամէն ինչ ընդօրինակում են ինձանից: Ես դիրք եմ բռնում ամէն բանի համար:

ԲԻԼՀԻ .— Ի՞նչպէս թէ ամէն բանի համար:

ՏՐԻԼ .— Այս', ամէն բանով: Գիտէ՞ք, ամբողջութեան համար, գլուխս, ձեռքերս, ոտքերս: (Նստում է արողի վրայ, հանում է կօշիկը:) Ահա' իմ ոսու: Դա ամենագեղեցիկ ոտն է ամբողջ Փարիզում: Մի ոտ էլ ես կայ, որը նրա հետ կարող է մրցել, ահա ոս է (ցոյց է տայիս միւս ուր):

ԶՈՒԶՈՒ. — Ա՛հ, հրաշալի արարած, թոյլ տուր գոնէ
ձկուտովս մերձենամ այդ սատանայի ոտքին (մեկնում է
ձեռիլ):

ՏՐԻԼ. — (կօշիկով խփում է) Դէ'... ձեռքդ... իմ
ոտքերս միայն նայելու համար են:

ԲԻԼԼԻ. — (Յած Տագիին) Տաֆի, դա իրաւ աշխարհի ու-
թերորդ հրաշալիքն է:

ՏՐԻԼ. — Ի՞նչ է, գեղեցիկ են, իմացած եղէ՛ք, որ եթէ
երբ և իցէ հարկաւոր լինեմ, ես ձերն եմ ժամը հինգ գրան-
քով ամէն բանի համար... իսկ եթէ դուք տաղանդաւոր
էք և ազգատ, այն ժամանակ ձրի: Բայց պէտք է դուք
տաղանդաւոր լինէք... ձեր դէմքը... ձեր աչքերը շատ
բան են ասում, իսկ երեւի աւելի շատ բան են տեսնում:
Ուրեմն բարեկամներ լինենք (սեղմում է ձեռիլ):

ՍՍՆԹԻ. — Պարոնայք, ես քաղցած եմ, Միմիշ, գնա՛տե-
զու, Զուզուն մեզ համար սուրճ կը պատրաստէ: Այժմ, ի
գործ:

ՏՐԻԼ. — Հիմա՛, մինչդեռ դուք կը պատրաստէք ձեր
ներկերը, ես կը նախաձաշեմ (ուտում է եւ յետոյ մի սիզար և
ծխում):

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ, ԱՎԵՆԳԱԼԻ ԵՒ ԺԵԿԿՈ

ԱՎԵՆԳԱԼԻ. — (Հազուած հիմ հազուածներ, Ժեկկոյի ձեռ-
ուին մի ջուրակ, ծածկուած կեղսու կտրուկ: Ավենգալին երգելով
մնում է:) Պօնժուր մէ զ' անվան:

ԱՄԷՆԹԻ. — Ա՛հ... Ավենգալին:

ԱՎԵՆ. — Այս՛, Ավենգալին, և մի ուրիշ Ավենգալի, որը
չորս միլիոն գրանքով չէք կարող գտնել: (Տրիլլիին) Պօնժուր,
ժամանուազէլ Տրիլլի:

ՏԱՖԻ. — Քեզ ո՞վ ասաց որ Տրիլլին մեզ մօտ է:

— 9 —

ԱՎԵՆ. — Դուք այդ չէք հասկանայ, Մըսթըր Տաֆի, ո-
րովհետեւ դուք շատ պաղ էք և միեւնոյն ժամանակ երակ-
ներ չունիք. և պիկն, ի՞նչ էք անում:

ՍՍՆԹԻ. — (Ժեկկոն դիմելով) Մենք անծանօթ մարդուն
ենք նայում, նա երեւի իրան այնքան ազատ չի զգում, ինչ-
պէս Ավենգալին:

ԱՎԵՆ. — (Առաջ բերելով Ժեկկոին) Ահա՛ իմ գործիքը՝
Ժեկկոն, իսկ Ժեկկոն ունի իր գործիքը, այն է ջութակը,
հրաշալի ծածկոցի մէջ, որ մեզ երկուքիս էլ ծառայումէ
թաշկինակի փոխարէն: Ես այդ ջութակի վրայ նուագում
եմ Ժեկկոյի մասներով: Մի զարմանաք, երբ Ժեկկոն լրում
է, նրա հանճարը միայն մատներին մէջ է, իսկ լեզուն մի
փոքր մասուած է Պիգիկանդօից, Թէրմանտօից եւ Անտէ-
րանդօից:

ՄԻՄԻԾ. — Նա կակա՞զ է:

ՏՐԻԼ. — Խե՛զմ...:

ԱՎԵՆ. — Դուք բարի սիրտ ունիք, մատուազէլ. ես
հանդիպեցայ Ժեկկոին կայրցիկում, երբ նա պատուհանների
տակ նուագում էք ազգային ապուչ եղանակներ: Իսկ այժմ
Ժեկկոն յայտնի արտիստ է: (Ալիսելով դաշնակը) Ա՛... Փօր-
դիկիանօ, յոյս ունիմ լաւ է լարուած:

ՍՍՆԹԻ. — Երէկ են Լոնտոնից ուղարկել:

ԱՎԵՆ. — (Վերցնում է ազոր) Տօնելու-վեդիր, երբեմն և
Բրիտանացիք խելացի են լինում: Հիմնե՛շ... այս ոնտու-
կում դրած են քաշցած կատաներ և դեռ կիսամորթ աքա-
զազներ: Ժեկկո՛, նուագենք մատնուազէլի համար:

ԺԵԿԿՈ. — (Կալմակը) Նուագե՞նք:

ԱՎԵՆ. — Այօ՛ն...

ՏՐԻԼ. — Ես պատրաստ եմ Տաֆի, սկսենք (համում է
հազուածները, Տագիին երան զարդարում է:) Ա՛յ, ինչպէս ցուրտ
է այստեղ:

ՏԱՅԻ. — (Կուժը տաղով Տրիլիլիմ) Այդպէս... ձախ ոտըդ
մի քիչ յետ... հրաշալի է... , Բիլլի դու այդպէս ոտ տե-
սել ես, դա տո չէ, այլ հրաշալիք:

ԲԻԼԼԻ. — Տափի՛, դա ինքը գեղեցկութիւն է:

ՏՐԻԼ. — Բաւական է ինչքան խօսեցիք, ես տակաւին
Տիւրէնի մօտ էլ պէտք է գնամ:

ԲԻԼԼԻ. — Ա՛հ, Տափի՛, Տափի...

ՏԱՅԻ. — Ի՞նչ է սիրելիս:

ԲԻԼԼԻ. — Ես ափսոսում եմ այդ հրեշտակին:

ՏԱՅԻ. — Հըմ...

ԲԻԼԼԻ. — Միթէ այդ Ասոռուածային կազմուածքը նրան
չէ փրկելու:

ՏԱՅԻ. — Օ՛... իմ գեռատի իտէալիստու... խօսի՛ր նը-
րան հետ: Տրիլլին երեխայի նման մաքուր սիրտ ունի:

ԲԻԼ. — (Նստում եւ երկար ժամանակ դիտում է) Տրիլլի՛...

ՏՐԻԼ. — Է...

ԲԻԼ. — Վաղո՞ւց է որ դուք մօտէլ էք:

ՏՐԻԼ. — Օ՛... արդէն հինգ տարի է. իմ մայրիկս է այդ
բանը գլուխ բերել, և ես կարծում եմ որ դա նոյնպէս հեշտ
է, ինչպէս գուլպաներ կարկտելը: Օ՛, եթէ Բիլլու արրե-
ցողութեամբ չի վատներ իմ փողերը, ես հիմա բաւականին
գումար կ'ունենայի և ինձ համար արհեստանոց մը կը բա-
նացի:

ԲԻԼ. — Ո՞վ է այդ. Բիլլու:

ՏՐԻԼ. — Եմ նախկին սիրահարը:

ԲԻԼ. — (Ընկընած) Ուրեմն դուք սիրե՞լ էք:

ՏՐԻԼ. — Հա՛, հա՛, հա՛, ե՞ս, ի հարկէ... ինչո՞ւ վա-
խեցաք: Բայց Բիլլու լաւ էր վերաբերում դէպի իմ փոք-
րիկ եղբօրը՝ ժամնօին. մենք լաւ էինք ապրում, բայց յե-
տոյ Բիլլու սկսաւ արեցողութիւն անել, սկսեց ինձ ծե-
ծել, իսկ դրանից մարդու կաշին է փճանում... ես աես-
նում էի որ աշխատանքս պակսում է, թողի Բիլլու:

ԲԻԼ. — Բայց Բիլլու:

ՏՐԻԼ. — Զեզ ի՞նչ: Լատինական թաղում զրա համար
չեն դատապարտում:

ԲԻԼ. — (Սարսահած) Տրիլլրի՛...

ՏՐԻԼ. — Բայց ինչո՞ւ վախեցաք: Ես աշխատանքովս
եմ ապրում... բայց ինքս էլ չզիտեմ այդ ինչպէս պատա-
հեղ... ես բացի ջրից ոչինչ չեմ իմում... ես ամենից շատ
աշխարհում սիրում եմ եղբօրս՝ ժամնօին... ես հէնց նրա
համար եմ թոյլ տալիս որ ինձանից նկարեն: Ես աւելի ու-
րախութեամբ կարելով կ'զբաղուէի կամ լուացարարուհի կը
դառնայի և կամ կ'ամուսնանայի մի զործակատարի հետ...
մենք հրաշալի կ'ապրէինք: Ա՛յ...

ԲԻԼ. — Ի՞նչ պատահեց ձեզ:

ՏՐԻԼ. — (Չեղմերով սեղմելով այժերը) Կրկին այդ ցաւը
ակսուեց:

ԲԻԼ. — Դուք հիւանդ է՞ք:

ՏՐԻԼ. — Վաղո՞ւց է... հայրս էլ ունէր այդ հիւանդու-
թիւնը, դա անտանելի ցաւ է:

ԲԻԼ. — Ինչո՞ւ չէք բժշկում:

ՏՐԻԼ. — Զէ օգնում: Ասում են դա ջղային հիւանդու-
թիւն է: Ա՛հ, խեղճ հայրիկ:

ԲԻԼ. — Դուք նրան սիրո՞ւմ էիք, երեւի նա լաւ մարդ
էք:

ՏՐԻԼ. — Օ՛, հայրիկս, նա իսկական ջէնդըլմէն էք: Խե՞ղճ,
խեղճ հայրիկ: Փա՛ռք Աստծոյ իմոտքերը գեղեցիկ են... նը-
րանք մեզ կը կերակրեն մինչեւ որ ժամնօն մեծանայ, իսկ
յետոյ, ես կը գառնամ լուացարարուհի:

ԲԻԼ. — Եթէ զտնուի մի մարդ, որը ձեզ փոխադա-
բար սիրէր:

ՏՐԻԼ. — Դուք կարծում էք որ կարելի է ինձ լրջօրէն
սիրել:

ԲԻԼ. — (համոզուած) Կարծում եմ:

ՏՐԻԼ. — (Մասձում է և յետոյ իրան ծածկում:)
ՏԱՅԻ. — Ե՛... ՏՐԻԼՐԻ, այդ ի՞նչ էք անում:

ՏՐԻԼ. — Ի՞նչ պատահեց:

ՏԱՅԻ. — Ի՞նչու ծածկեցիք ձեզ:

ՏՐԻԼ. — (ուշի գաղով) Իրա՛ւ, ես բոլորովին չեմ նկատել... այստեղ ցուրտ է:

ԲԻԼ. — (ցած, Տագիին) Տափի... Կարծեմ դու չը սխալուեցեր:

ՏԱՅԻ. — Ի՞նչում:

ԲԻԼ. — Յետոյ (անցնում է աջ, վերցնում և վրձինը, և սկսում է նկարել պատի վրայ Տրիլրիի ուրվ:)

ՍՎԵՆ. — Բառական է, և պիեն: Եւ ի՞նչ կ'առեն ԺԵԿԻՕ, ժանք էշերի ախոռն ենք ընկել. Նրանք խօսում են, երբ նուազում է Սվենգալին... յիմարնե՛ր:

ՏՐԻԼ. — Իսկ դուք լաւ էք նուազում: Միայն գիտէք, ախոռը բան է, այդ ի՞նչ էր:

ՍՎԵՆ. — Սրա անունը Խօզամունա՞ Շուրէրդի:

ՏՐԻԼ. — Իսկ ի՞նչ է նշանակում Խօզամունտան:

ՍՎԵՆ. — Խօզամունրան Կիսրոսի կոմսուհին էր, իսկ Կիսրոսը, կղզի է, մասմուազիլ:

ՏՐԻԼ. — Իսկ ի՞նչ է նշանակում Շուրէրդ:

ՍՎԵՆ. — Շուրէրդը կղզի չէ, մատմուազէլ, Շուրէրդը իմ հայրենակիցն է... նա երաժշտագէտ էր և նուազում էր դաշնամուրի գրայ, ի՞նչպէս ես:

ՏՐԻԼ. — Ա՛, ուրեմն Շուրէրդը ջէնթըլմէն է, ես նրան չեմ ճանաչում:

ՍՎԵՆ. — Շատ ցաւում եմ մատմ ւազէլ... նա մի փոքր տաղանդ էր, մի գուցէ դուք այս տւելի հաւանէք... (Եւազում է շամսոնիր, բոլորը ծիծալում են:)

ՏՐԻԼ. — Այո՛, այդ աւելի եմ հաւանում, որովհետեւ ուրախ բան է: Դա էլ ձեր հայրենա՛ի՞ցն է յօրինել:

ՍՎԵՆ. — Աստուած մի արացէ:

ՏՐԻԼ. — Այդ ի՞նչ բան էր:

ՍՎԵՆ. — Սրան անուանում են սիրահարուած աւանակ-ների տեսակցութիւնը, ջուր խմելու ժամանակ:

ԱՄԵՆՔԼ. — (Ծիծալում են) Հա՛, հա՛, հա՛...

ՍՎԵՆ. — Դուք հիանալի ճաշակ ունէք. երեւի երաժը-տութիւնը շատ էք սիրում:

ՏՐԻԼ. — Իրաւ չը գիտեմ: Իմ հայրիկա թռչունի նման երգում էր, նա սովորաբար երգում էր Բիւլ-բոյց և ամենքը լաց էին մինում: Դուք գիտէ՞ք Բիւլ-բոյց:

ՏԱՅԻ. — Ի հարկ է:

ՏՐԻԼ. — Ես կարող եմ այդ երգել. (Տագիին) Դուք թոյլ կը տաք (սկսում է երգել սխալներով):

ԱՄԵՆՔԼ. — (Ծիծալում են:)

ՏՐԻԼ. — Ի՞նչո՞ւ էք ծիծալում... իմ լսողութիւնը վատ է, բայց գիտէք ի՞նչ է ասել Լիթօլֆը՝ որ, ոչ մի երգուհի չի կարող ինձ պէս ամենաբարձր և սմենամեծ նօթաները վերցընել, որ իմ չնչառութիւնս աննժան է, միայն երաժշտական կրթութիւն չունիմ, իսկ Սվենգալին միշտ հիանում է, երբ ես երգում եմ. ճիշդ է Սվենգալի...:

ՍՎԵՆ. — Տօններ-վիդիր, Լիթօլֆը իրաւացի է եղել, ես լսում եմ այն ինչ որ ուրիշները չեն կարող լսել... թոյլ տուէք մատմուազէլ, ես նայեմ ձեր կոկորդը (ուզում է մօտենալ):

ՏԱՅԻ. — (Խիում է Սվենգալիի վզին) Այստեղ միայն նը-կարիչները կարող են մօնել և ոչ թէ կրքուտ պաւիաները:

ՍՎԵՆ. — (Հազում է) Ներողութիւն, պարոննե՛ր, մըսթէր Տափի, ես մօռացայ որ էշերի ախոռում աքացիներ տալը սովորական բան է. խոզագէմ պլդոկ, նա իմ վիզը կոտրեց:

ԶՈՒԶՈՒ. — Սուրճը պատրաստ է:

ՏՐԻԼ. — Տուէք ինձ մի բաժակ: Տափի, ես մի բոպէ կ'իջնեմ:

ՏԱՅԹԻ. — Իջեք հրեշտակո, նկարը չի յաջողւում... Սվէնգալին էլ իր երաժշտութեամբ... անպիտանը հրաշալի է նըւագում:

ՍՎԷՆ. — Հիանալի է նուագում, հա՛, հա՛, սօններ-վիշեղեր, այսքան լաւ, որ դուք սկսել եք աքացիներ տալ: Ժէկկօ՛, դիր քո ջութակը ծածկոցի մէջ, հրաշալի մի ծածկոց, որի մէջ կարելի է խնջել: Հիմնել, ի՞չ ոտս այլեւս այստեղ չի լինի: (Մինիշին, որը սուրա և ածում) Միմի՛չ, իսկ ի՞նձ, մի գուցէ ես արժանի չեմ մի գաւաթ սուրճի, որը պատրաստուած է սկիզբիտարի վրայ և խառնուած է կեղտոտ վրձիններով:

ՄԻՄԻ՛Ծ. — Գեղեցիկո, վերցրէք բոմատի ամանը, բոլոր բաժակները գրաւուած են:

ՍՎԷՆ. — (Վերցնելով ամանը) Ոչի՞նչ, կր գայ ժամանակը, որ այս ամանը կը դնեն Վիեննայի թանգարանը, որի վրայ մակագրուած կը լինի. «Այս ամանից սուրճ է խմել յայտնի և հանձարեղ երաժիշտ Սվէնգալին»: Զուզո՛ւ, տուրինձ 50 ֆրանք մինչեւ վաղը:

ԶՈՒԶՈՒԻ. — 50 ֆրա՞նք: Սիրելիս ես ամբողջ շաբաթուայ համար 10 ֆրանք ունիմ:

ՍՎԷՆ. — Լաւ, տո՛ւր 5ը, սատանան տանի: 0՛, այդ գեղեցիունի անգլունիք մեծ պատիւ կը համարեն Սվէնգալի կոճակները կը պարագնել և կամ կարկըտել նրա գուլպաները և շապիկները:

ԱԱՆԹԻ. — Վերջապէս կը լուե՛ս, պարծենկոտ:

ՍՎԷՆ. — Ես կը լուեմ, երբ կը գագարի իմ վիզո ցաւելէ: Անսուններ... ես ձեզ ցոյց կը տամ սուսերամարտով թէ ո՞վ է Սվէնգալին. Մըսթըր Բիլի, դուք աչքերով ուտում էք մատմուալէլ Տրիլբին: Դուք ձեր խոզադէմ երեսով հրաշալի միմիք ունէք, չէ՞ք կամենում արդեօք ձեր չնորհըր ցոյց տալ սուրերի վրայ: (Վերցնում է պատից մենամարտի սուրը)

ԲԻԼ. — Պատրաստ եմ (վերցնում է միս սուրը:)

ԱԱՆԹԻ. — Օհօ՛, սատանան տանի, դա մենամարտութիւն է:

ԶՈՒԶՈՒԻ. — Հա՛, հա՛, կեցցէ՛ Սվէնգալին, կեցցե՞ս....

ՏԱՅԹԻ. — (Բլուլին) Սիրելիս մի լաւ հարուած տուր նրան:

ՍՎԷՆ. — Ապահով եղէք: Սվէնգալին սուրերու վըրայ վարժուած է ոչ պակաս քան դաշնամուրից: (Կուռու են, Բիլիին ուտում է մի հարուած և բողնում սուրը:)

ԱԱՆԹԻ. — Բիլին հոգնել է ճանապարհից ես կը փոխարինեմ: (Վերցնում է Բիլիին սուրը) Առամերս չի հանես:

ՍՎԷՆ. — Վախկոտնե՛ր, նրանք միայն իրանց ատամներն են ցոյց տալիս ծաղրելու ժամանակ, (կուռու են, սուրը դուրս կը բռջի Սանրիի ձեռնից) դօններ-վիշեղ, անհամեշտ է կապել սուրը ձեր ձեռքին մէջ, սիլօրտ:

ԶՈՒԶՈՒԻ. — Օհօ՛, կեցցե՞ս Սվէնգալի, բրավօ՛....

ՏԱՅԹԻ. — Ապասի՛ր, ես կը փոխարինեմ նրան: Դէ բարեկամ, մեղաւորը դու ես (կուռու են) 0՛... դու հրաշալի ես մենամարտում... ո՞ր ատամգ հանեմ:

ՍՎԷՆ. — Աջ ժանիքը (խփում է Տաֆիի դշին:)

ՏԱՅԹԻ. — Է՛ք... վատ չէ... քոյ այդ հարուածը թանգ կը նստի քեզ... հո՞պ....

ՍՎԷՆ. — (Զգում է սուրը եւ ատամները բռնում է:)

ՏԱՅԹԻ. — Պատրա՞ստ ես, սպասում եմ:

ՍՎԷՆ. — Բաւական է:

ԲՈԼՈՐԸ. — (Ծիծաղում են:)

ՍՎԷՆ. — Բոլորը մէկի դէմ... 0՛ բայց ես չեմ յուսահատիր, հանձարեղ մարդիկ միշտ մենակ են եղել. Ժէկկօ, տուր ինձ ծածկոցը:

ԺԷԿԿՕ. — (Տափս է) Մի՛, մի՛ խնջեր...

ԲԻԼ. — (Բարեկարութեամբ) Միմիթարուեցէք Սվէնգալի... դուք գտաք ձեզ նման մենամարտով, բայց չկայ ձեզ նման նուագող:

ՍՎԵՆ.— Ես հակառակորդներից չեմ վախենում ոչ մի քանով... միշտ ծիծաղում է նա, որ վերջը կը ծիծաղի: Հիմնելով, դուք խմեցէ՛ք գաւաթներից, իսկ ես օժանելիքի ամանից, ամենքն ըստ արժանւոյն... Սվենգալին ծնուել է աղքատ, նա չունի վայելուչ զգեստներ, բայց եոր Սվենգալին նուագում է կօնցէրդներում, նրան լսում են ջէնդըլմէնները, լի գրպաններով, և գեղեցիկ երիտասարդուններ, աղամանդներով զարդարուած: Ես համոզուած եմ որ նրանք պատրաստ են իրանց հարստութիւնը տալ իմ տաղանդին: Ո՞վ աւելի լաւ գրութեան մէջ է: Ա... դօնիեր-վիշիր, իսկ հիմա, խմենք հոտած սուրճը, ամանի միջից:

ԶՈՒԶՈՒ.— Պարոնա՛ք, նորութիւն, նորութիւն...:

ԱՄԵՆՔԸ.— Ի՞նչ է:

ԶՈՒԶՈՒ.— (Վազելով պատին) Նայեցէ՛ք...:

ԱՄՆԹԻ.— Տրիլրիի ոտը:

ՏՐԻԼԲԻ.— Իմ ոտը:

ՏԱՅԻ.— Բիլլի, դու հրաշագործ ես:

ՏՐԻԼ.— Օ՛, ի՞նչ լաւն է: Դա իմ ոտիս ամենաճիշտ նըկարն է: Մաթըր Բիլլի, դուք երեւելի տաղանդ էք:

ՍՎԵՆ.— Ժէկկօ՛, դու այդպիսի ապօւշներ տեսել ես, նրանք պատրաստ են ճաքել հրճուանքից, որ նրանցից մի երկարականջ լակոտ պատն է մրոտել, հա՛, հա՛, հա՛...:

ՏԱՅԻ.— Տես որ նախանձից չը տրաքես:

ՍՎԵՆ.— Ե՞ս նախանձեմ... հա՛, հա՛, հա՛..., ո՞ւմ, Բիլլիից, ի՞նչ է արել նա, ի՞նչ է գտել նա, նա արել է այն, ի՞նչ որ կարող է անել ամէն մէկ վրձինով նկարող:

ԱՄՆԹԻ.— Իսկ դո՞ւ, ի՞նչ գիւտ ես արել:

ՍՎԵՆ.— Ես գտել եմ բիշ-զանօն, նա կորած էր անցեալ դարուն, և ես, ես Սվենգալիս, գտայ նրան: Դուք չէք հասկանայ... օ՛, եթէ համաձայնուէր Տրիլրին իմ աշակերտուհին դառնալ, ես ցոյց կտայի ձեզ չորս տարուց յետոյ թէ ի՞նչ բան է բիշ-զանօն: Ես չգիտեմ նուագել ջու-

թակի վրայ, բայց ես գիտեմ սովորեցնել... իսկ հիմա լեցուցէք ինձ համար մի աման հոտած սուրճ...:

ՄԻՄԻՇ.— Ուրախութեամբ, գեղեցիկս, քեզ համար մընացել է թանձր մրուրը:

ՏՐԻԼԲԻ.— Վերորէք իմ բաժակը, ես սրանից էլ չեմ սւզում:

ՍՎԵՆ.— Դուք չատ գեղեցիկ էք գոչում, մատմուազէլ: Դօնիեր-վիշիր: Այդ գոչը հաչում է ձեր սրտի խորքից, թոյլ տուէք նայել ձեր կոկորդը:

ՏՐԻԼԲԻ.— Համեցէ՛ք (քանում և բերանը:)

ԱՄՆԹԻ.— Զգոյլ... դու նրան կուլ կը տաս:

ՍՎԵՆ.— Հիմնել, ձեր քիմքը նման է Պանդէոնի գմբէթին, 32 բրիտանական ատամներ, սպիտակ՝ ինչպէս ձիւն, խոշոր՝ ինչպէս եղան ատամներ... ի՞նչ հրաշալի ովզնեանոր, բացի գեղեցիկ բարձր կրծքից, ձեր թոքերը ստեղծուած են մի միայն երգելու համար:

ՏՐԻԼ.— Ֆի, Սվենգալի, դուք ինձ վիրաւորում էք: Ես մօտէլ եմ, կենդանի մօտէլ, տաք արիւնով և փափուկ ու բարի սրտով:

ՍՎԵՆ.— Օ՛, ալո՛, դուք մօտէլ էք և չատ գեղեցիկ մօտէլ, բայց տաք արիւն ունին Տաֆին և Բիլլին: Երբ ես նուագում էի Շուրէրդի Խօզաւունան, դու կանգնած էիր նրանց առաջ կիսամերկ, դուք թոյլ էիք տալիս ձեղանից նկարել, դուք չէիք կամենում լսել Սվենգալիին, միակ մարդուն, որը գիտէ և հասկանում է ձեր իսկական արժէքը:

ՏՐԻԼ.— Օ՛, այդ ձեր լեզուն առանց ոսկրի է:

ՍՎԵՆ.— Ցիշեցէ՛ք, և աշխատեցէք չմոռանալ Սվենգալիի ասածները: Երբ դուք կը ցանկաք դառնալ այնպիսի հոչակ, որպիսին կը լինի Սվենգալիին, այն ժամանակ եկէ՛ք ինձ մօտ: Կը ցանկա՞ք հոչա՞կ, հարստութիւն, ես կը տամ ձեզ, դուք կը լինէք հիւանդ, ես կը բժշկեմ ձեզ:

ԲԻԼ.— Եթէ դուք իրաւ այդպէս հրաշագործ էք, ձեր
շնորհը հէնց հիմա ցոյց տուէք:

ՍՎԵՆ.— Դուք տկա՞ր էք, մատմուազէլ:

ՏՐԻԼ.— Դատարկ բան է, վաղը կ'անցնի:

ՍՎԵՆ.— Ինչո՞վ էք հիւանդ դուք, մատմուազէլ:

ՏՐԻԼ.— Աչքերս են ցաւում, երեկոյեան աւելի վատ-
կը լինի, իսկ առ այժմ համբերել կարելի է:

ՍՎԵՆ.— Ինչո՞ւ համբերել . . . , դուք թոյլ կը տաք մատ-
մուազէլ, ես բժշկեմ ձեզ:

ՏՐԻԼ.— Ի հարկէ, դեղ է՞ք տալսւ:

ՍՎԵՆ.— (արող առաջ յաշելով) Ես միայն ձեզ աթոռի
վրայ կը նստեցնեմ:

ՏՐԻԼ.— Ա՛յու, ես վախենում եմ:

ՍՎԵՆ.— Ի՞նչ էք առում, մատմուազէլ, ես մատով ան-
դամ չեմ դպչիլ ձեզ: (Տրիլին նստում է) Այդպէս . . . , հիմա
մտածեցէք ինչի՞ մասին կամենում էք, համարեցէք ինձ
շառլաթան, բայց նայեցէք աչքերիս . . . : Այդպէս: Այժմ
լա՞ւ էք զգում ձեզ:

ՏՐԻԼ.— Հրաշալի:

ՍՎԵՆ.— Մի բոպէ ևս. այդպէս: (Փակում է նրա աջե-
րը): Խօսեցէք նրա հետ . . . , նա չի կարողանայ բանալ աչ-
քերը:

ՏՄՅԻՒ.— Տրիլի՛, նայեցէք ինձ:

ՍՎԵՆ.— Նա չի շարժուի, առաջարկեցէք նրան վեր
կենալ:

ՏՄՅԻՒ.— Վեր կացէ՛ք, Տրիլի՛, լո՞ւմ էք, վեր կացէ՛ք:

ՍՎԵՆ.— Հիմա ես նրան կ'արթնացնեմ: Տրիլի՛, վեր
կա՞ց, բաց արա աչքունքդ, և մոտեցի՛ր ինձ:

ՏՐԻԼ.— (Կատարում է):

ՍՎԵՆ.— (Փշում է նրա երեսին) Առո՞վ էք, մատմուազէլ:

ՏՐԻԼ.— (Արթնացնով): Այս ի՞նչ լաւ էր, ես առող եմ,
Տաֆի, ես առող եմ:

ՄԻՄԻԾ.— Իսկ ի՞նչ էիրզգում, սիրելի՛ս:

ՏՐԻԼ.— Օ՛, հրաշալի էր . . . : Այժմ ոչ մի ցաւ չեմ զգում: շնորհակալ եմ, շնորհակալ եմ ձեղանից (սեղմում է նրա ձեռ-
լը):

ՍՎԵՆ.— (Ցուզմունիցից խեղուելով): Օ՛ . . . , Տրիլի՛, Տրիլ-
րի . . . :

ՏՐԻԼ.— Դուք ձե՞զ վրայ առիք հիւանդութիւնը:

ՍՎԵՆ.— Օ՛, այո, մատմուազէլ, ես ընդունեցի նրան իմ
մէջս, նա այժմ իմ թեւերիս մէջ է, բայց այդ ոչինչ է, և
մինչեւ անգամ ինձ դուր է գալիս, որովհետեւ նա ձերն է...
իմ հասցէն է Տիր լիարդ փողոց, համար 12ը . . . չի մոռանաք . . .

ՏՐԻԼ.— Որքա՞ն ըրարի էք դուք:

ՏՄՅԻՒ.— Դէ՛, գործի սկսենք: Տրիլի՛, դուք կարո՞վ էք
շարունակել:

ՏՐԻԼ.— Ի հարկէ, ինձ շատ լաւ եմ զգում (իր տեղն է
կանգնում):

ՏՄՅԻՒ.— (Սվենի գաղին) Իսկ դու, բարեկամ, մոռացի՛ր
քո փորձերը, և խորհուրդ եմ տալիս, երբեք չի կրկնել: Գի-
տե՞ս, ես էլ եմ քնացնում, ուրիշ տեսակ: Նստի՛ր գաշնա-
մուրի մօտ ու մի բան նուազիր մեզ համար: Ժէկիօ՛, ցոյց
տուէ՛ք ձեր տաղանդը:

ԺԷԿԻՕ.— Ուրախութեամբ,

ՍՎԵՆ.— Հա՛, հա՛, հա՛, մըսթըր Տափի, ձեր աչքերը
ուեւացել են և կայծակի նման վառվառում են, դօններ-վկյու-
լաւ նշան է . . . : Դէ ժէկիօ՛, ի՞նչ կը նուազենք: Ա . . . մատ-
մուազէլ Տրիլիլին, բհմ-բոյց: Լա՛ւ, սկսի՛ր:

ԱԱՆԹԻ.— Ես պատրաստ եմ:

ԲԻԼ.— (Կանգնած Տրիլիին առաջ) Դուք կ'այցելէ՞ք ՍՎԵՆ-
գալին:

ՏՐԻԼ.— Երբ հիւանդանամ:

ԲԻԼ.— Զգուշացէ՛ք: Այդպիսի մարդը կարող է ձեղ ամ-
որդիա ենթարկել իր կամքին:

ՏՐԻԼ. — Ես ինքս էլ վախենում եմ նրանից... նա վազուց ինձ հետեւում է :

ԲԻԼ. — Իսկ դո՞ւք :

ՏՐԻԼ. — (ուսեղը վեր բաշելով) Զը գիտեմ..., ո՛չ, այդ սարսափելի կը լինի..., նա այնպէս զարհուրելի է...: Ես զգում եմ նրա սէջ մի ինչ որ ոյժ, երբեմն ինձ կաշկանդում է : Բայց միեւնոյնն է, ինչ կը լինի, կը լինի :

ԲԻԼ. — Տրիլրի.. դուք այնքան երիտասարդ էք, այնքան գեղեցիկ : Ո՞վ գիտէ, ի՞նչ է սպասում ձեզ ապագայում :

ՏՐԻԼ. — Ահա՝ թէ ի՞նչ կը նշանակէ նկարիչ...: Ո՛չ, իմ սիրելի Բիլլի, ես արդէն հասարակութիւնից կարուած մի կտոր եմ, ես թէեւ վատ բան չեմ արել, բայց աշխարհում շատ վատութիւն կայ :

ԲԻԼ. — Ճիշդ է, բայց միթէ միայն վատութիւն կա՞յ : Միթէ Տաֆին, Սանթին ձեզ զնահատել են նրա համար, որ դուք գեղեցիկ կազմուածք ունէք : Ինչպէս նկարիչներ, նըմանք ձեզ դնահատում են իրեւ կին, իսկ Սվէնդալին...

ՏՐԻԼ. — (Երկար դուրքենի յետոյ զրոխը խոնարիլով) Ես չեմ գնար նրա մօտ :

ԲԻԼ. — Այսո՞...:

ՏՐԻԼ. — Մի նայէք ինձ, ես չեմ կարող կանգնել ձեր առաջ :

ԲԻԼ. — Տրիլրի, ես նկարիչ եմ :

ՏՐԻԼ. — Ո՛չ..., զնացէ՛ք... մենք խանդարում ենք Տաֆին, դուք այնպէս աչքեր ունիք, նրանք թա փանցում են ուղիղ մարդու հոգու մէջ...: Ա՛հ, ի՞նչ լաւ է նուագում Սվէնդալին... զնացէ՛ք, ես այլեւս չեմ կարող... (ձեռից վայր և ձառնում կուժը, որը կոտրում է, եւ նսերով սանդուխին վրայ, ծածկում է երեսը ձեռքերով):

ՏՐԻԼ. — Ի՞նչ է... ի՞նչ պատահեց :

ՍՎԵՆ. — (Մօսեևարով) Յիմարնե՛ր, նրանք չեն հասկանում, երբ նուագում է Սվէնդալին, ճնշում են գործում ամպերը օդի մէջ :

ԲԻԼ. — Բրազօ՛ Սվէնդալի : Իսկ ամպերի ետեւից փայլում է արեւը :

ՍՎԵՆ. — Ոյո՛, եւ այդ արեւը ես եմ, Սվէնդալին... իմ հասցեն է Տիրլեարդ փողոց, համար 12 :

ԲԻԼ. — Տրիլրի՛, դուք կնա՞ք այնտեղ :

ՏՐԻԼ. — Ո՛չ...:

ՍՎԵՆ. — Ա՛հ...:

ՎԱՐԱԳՈՅՔ



Բ. ԱՐԱՐՈՒԱԾ

(Միեւնոյն տեսարանը, ծնունդի գիշեր, սեղանին վրայ դրուած է ծնունդի ծառը: Բոլորը հաւաքուած են սեղանի շուրջ, բացի Սվեճզալիից՝ որ անկիւն մը նստած, խնձոր մը կը կրծէ:)

ՏԵՍԻԼ Ա.— Տպի, ՍԱՆԹԻ, ԲԻԼԻ
ՍՎԵՆԴԱԼԻ, ՏՐԻԼԻ, ԶՈՒԶՈՒ

ՍԱՆԹԻ.— (բաժակը ձեռփին) Պարոնա՛յք, ուշադրութիւն...:

ԶՈՒԶՈՒ.— Հանդա՛րտ, պարոննե՛ր, լորտ Սանթին կենաց է առաջարկում:

ՍԱՆԹԻ.— Միլորտնե՛ր, դուք տեսնում էք ձեր առաջ երեք անգլիացիներ. միլորտներ, մենք գեղարուեստի ներկայացուցիչ ենք, աշխարհիս ամենաբարձր գեղարուեստի: Մենք հիւր ենք հրաշալի մի պազի, որ լնծայել է Սմերիկայի ազատութեան արձանը: Մենք զգացուած ենք ֆրանսացի հիւրընկալութիւնից... բայց ֆրանսացիք էլ պարծենալու իրաւունք պէտք է ունենան, որ կրթել են մեզնից մէկին հանձարի և մեծ տաղանդի մարդ, (բոլոր ծիծադրում են) սատանան տանի..., ես խօսում եմ Բիլիի մասին:

ԱՄԵՆՔԻ.— Կեցցէ՛ Բիլի, կենա՛ցդ:
ՍՎԵՆ.— Երկարականջ յիմարներ:

ՍԱՆԹԻ.— Միլորտնե՛ր, ես նկարիչ եմ, ես նկարում եմ Դօրէասօններին և նրանց սիրուհիներին, ես ձեզ ասում եմ, սատանան տանի իմ Դօրէասօններին... Բիլին պատիվրայ նըշկարել է Տրիլբիի ոտը, և այդ ոտը աւելի արժէ, քան ես, ամբողջապէս...: Պարոնա՛յք, մենք չնորհակալ ենք այս հիւրասիրութեան համար, բայց պէտք է դուք էլ չնորհակալ լինէք, որ ձեզ մօտ հիւր է Բիլին. Կեցցէ՛ Անգլիան:

ՍՎԵՆ.— Այ դուք փափկասուն Եւրոպացիներ, նրանք խմում են ազգութեան կենացը, տղամարդու կենացը և մառանում են կանանցը...: Կորչի՛ Բիլին, Տրիլբի կենացը:

ՏՐԻԼ.— Ո՛չ, ոչ, ես համաձայն չեմ:

ԱՄԵՆՔԻ.— Կեցցէ՛ Տրիլբի, կենա՛ցդ:

ՍՎԵՆ.— (Տրիլբիի ձեռփը բուներս) Երկու խօսք, Բրիտանացիք և Ֆրանսացիք տօնում են իրանց Քրիստոնի Ծնունդը..., ես գերմանական հրեայ եմ...:

ՏՐԻԼ.— Թողէ՛ք, թողէ՛ք, դուք սեղմում էք ձեռքս:

ՍՎԵՆ.— Մի բոպէ... դուք այրումէք իմ բոլոր նամակները, դուք չի պատասխանեցիք և ո՛չ մի խօսք, և ո՛չ մի քառ, ձեզ հետաքրքրում են այս անպիտանները, մի՛ նայէք նրանց: Ի՞նչ համեմատութիւն իմ և նրանց մէջ, ինչի՞ է նման ձեր Բիլին, իր հոտած ներկերով. իսկ Տափին, ինչո՞ւն պէտք, նա ստեղծուած է միայն նրա համար, որպէսզի մեզ նման արթիստների վզակոթին հասցնէ: Օ՛, Տրիլբի, ձեզ սիրում է Սվեճզալին և ձեր ոտքերի տակ է զնում իր տաղանդը և սիրտը, նա ձեզ խոստանում է հոչակ, հարրապութիւն և անմահութիւն:

ՏՐԻԼ.— Ո՛չ, ո՛չ... թողէ՛ք, ես վախենում եմ ձեզանից, ես վախենում եմ, երբ դուք ինձ հետ այդպէս էք խօսում և նայում աչքերիս, ես կարծես թէ քնում եմ... թողէ՛ք ինձ:

ՍՎԵՆ.— Մի՛ վախենաք... ես միայն սիրում եմ ձեզ, դուք հրաշալի էք, ես հաւատում եմ որ դուք մաշուել էք,

Դուք այն զիսի գեղեցիկ ոսկորներ ունիք։ Ես ուրախութեամբ կը կրծոտէի ձեր ամէն մի ոսկորը։

ՏԱՅԻ. — (Մօսենալով Տրիլիին) Ի՞նչ էր ասում, Տրիլի, այդ կրքոտ պավիանը։ Զի՞ կարելի որ բարձր խօսես։ (Կրսմրդում և Սվիենալին։)

ՍՎԵՆ. — ԱՇ (լնկնում և Սանրիի զիրկը) ԱՇ (լնկնում և Բիլիին և դպշում և նրան) ԱՇ, դո՞ւ էլ այստեղ ես։ Ես քոյ ձեռքերը կը փշեմ։ Այս ի՞նչ ձեռքեր են, կարծես երեխայի ձեռքեր լինին։

ԲԻԼ. — Մատիտ և վրձին բռնելու համար նրանք բաւականին ուժեղ են։

ՍՎԵՆ. — Իսկ ոտքերը, կարծես ձեռնափայտ լինեն։

ԲԻԼ. — Նրանք բաւականաչափ ամուր են, որ ձեզ մի լաւ աքացի տան, եթէ դուք չէք վերցնի ձեր ձեռքը Տրիլրից։

ՍՎԵՆ. — (Յետ յաշուկով լնկնում և Տայիի զիրկը) ԱՆԻԾՈՒԵ՛Մ, եթէ միւս անդամ ոտք կոփ եմ ձեր չէմքից։ Միմիշ, մի քիչ ջուր տո՞ւր։

ՏԱՅԻ. — Տրիլրիի և ինծի համար ալ մի բաժակ գիշենի։ Հանդարտեցէ՛ք, հրեշտակս, պավիան կապիկը հանդարտել է։ (Առնելով Տրիլիի թեւը, մօսենում և սեղանին)

ՍԱՆԹԻ. — Պարոնա՛յք, եկէ՛ք, ամենքս էլ պսակուենք, այն ժամանակ շատ ուրախ կը լինենք։ Ես կը գնամ Զուտզուին. (Տրիլիին) Տրիլրի՛, դու ո՞ւմ կը գնաս։

ՏԻԼ. — Ե՞ս..., ես ոչ ոքի չեմ գնալ, սատանան տանի միթէ մեղպէսներին հետ ամուսնանում են։ Մեզ կարելի է սիրել, նկարել, ծեծել, մինչեւ որ մարմիննիս կապտի։

ԲԻԼ. — (Յուզուած վեր և կենում)։

ՏԱՅԻ. — Բիլի, ո՞ւր։

ԲԻԼ. — Շատ տաք է (հեռանում և դեպի առանձնարան)։

ՏԱՅԻ. — (Մօսենալով) Դու հիւա՞նդ ես։

ԲԻԼ. — Ես շերմում եմ։

ՏԱՅԻ. — Ուրիշի սրտի խորքը քրքրելը ջէնդըլմէնի գործ չէ։ Ես կը լուեմ։

ԲԻԼ. — Ո՞չ, լսի՛ր, նա ասաց որ մեզ նմաններին հետ չեն ամուսնանար։ Դու համաձա՞յն ես։

ՏԱՅԻ. — (Ցոյց տալով բրամար) Ինձ համար, աւելի հեշտ է ծամել այդ երկաթը, քան թէ քեզ պատասխանել։ Բացի այդ, ես շատ եմ խմել։

ԲԻԼ. — (Դառն մվիտով) Ճշմարիտ չէ՝ որ ես անմիտ բան եմ մասածել։ Մեր շրջանի մի մարդ, կոնտոնի յայտնի բնտանիքից մի երիտասարդ, ուզում է ամուսնանալ մի մօտէլ աղջկայ հետ և օժիտ ստանալ նրա անցեալը, ձեւերը, ոճը։ Տափի, ես ինձ կորցնում եմ։

ՏԱՅԻ. — Դու ըրա՞ւ սիրում ես ...

ԲԻԼ. — Սիրում եմ, Տրիլրիի հոգին փայլում է ինչպէս աղամանդը՝ ցեխի մէջ։

ՏԱՅԻ. — Այո՛, ճիշտ է, եւ երանի նրան, ո՞վ որ կը կարողանայ այդ աղամանդը լաւ շրջանների մէջ դնել։

ԲԻԼ. — (Զարմացած) Տափի՛, դո՞ւ ...

ՏԱՅԻ. — Ա՛... չարժէ իմ մասին խօսիլ։ Արդեօք նա քեզ սիրում է։

ԲԻԼ. — Չը գիտեմ։

ՏԱՅԻ. — Ճշմարիտ չէ՛, դու գիտես։ Այս օրից, որ դուք ծանօթացել էք, նա թողել է մեր արհեստանոցը, լուսաւրութիւն պարձել և ծանր աշխատանքով պահում է եղբօրը։ Եթէ մեր հայրենակիցները ըշն դունեն իրենց սալօններուն մէջ, դու կը կորսնցնես աշխարհը ամենամեծ նկարիչի համբաւը։ Ա՛ն..., Բիլի, դու գիտես ես ո՞վ եմ, բայց ես իմ նախորդների բոլոր հոչակը կը տայի քո տաղանդի համար, եթէ հարկաւոր լինէր, սինչեւ անդամ ամբողջ աշխարհի հետ կարել իմ կապերը, սիրելով մի լաւ աղջկայ։ Երջանկութիւնը այն դիրքին էջ չէ, որը մենք ժառանգել ենք մեր նախորդներից, այլ որը մենք մեզ համար ենք ստեղծում։

Ես վստահ եմ որ, Տրիլրին կարող է լինել բարի, ազնիւ ու սիրող ամուսին։ Այժմ վարուիր, ինչպէս որ կամենում ես։

ԲԻԼ. — Շնորհակալ եմ, Տաֆի, ես գիտեմ ինչպէս պիտի վարուեմ։

ՏԱՖԻ. — Ուզում ես հէ՞նց հիմա խօսիլ Տրիլրիի հետ։
ԲԻԼ. — Այս՛...։

ՏԱՖԻ. — (Մասձեռով մի ռոպէ) Սպասիր...։ ՍԱՆԹԻ։
ՍԱՆԹԻ. — Հէ՛...։

ՏԱՖԻ. — Գլուխ։

ՍԱՆԹԻ. — (Մօսկնալով) Ո՞ր սատանան է քեզ քշել այս կողմը։

ՏԱՖԻ. — (Լուրջ) Ի՞նչպէս ես կարծում, ես շա՞տ եմ հարած։

ՍԱՆԹԻ. — Հը՛մ... կանգնի՛ր մի ոտիդ վրայ, այդպէս... իջի՛ր, այդպէս, բարձրացի՛ր, հրաշալի՛ է, էլի մի տասերկու շիշ կարող ենք խմել։

ՏԱՖԻ. — Տրիլրիի մասին ի՞նչ կ'ասես։

ՍԱՆԹԻ. — Թող ինձ կախեն, եթէ Տրիլրին իմ տեսած կանանցից ամենագեղեցիկը չէ, կարծես նա մի բարձր շըրջանի տիկին է, որ պարահանդէսի համամ գրիգէդի շոր է հագել։ Երդւում եմ Ժիւրիդիրով, որ նա գեղեցկուհի է։

ՏԱՖԻ. — Դու կ'ամուսնանցիր նրա հետ։

ՍԱՆԹԻ. — Ես անակտ եմ այդ բանի համար, բացի այդ, երբ որ նա ինձ գրկում է, ես զգում եմ որ նա չէ զրկում։

ՏԱՖԻ. — Իսկ ի՞նչ կասես դու Բիլլիի մասին։

ՍԱՆԹԻ. — Որ նա խենթ է, իր բնական մեծութեամբ։

ՏԱՖԻ. — Դու կը սեղմա՞ս նրա ձեռքը, եթէ նա Տրիլրիի հետ ամուսնանայ։

ՍԱՆԹԻ. — Ես նրան կը խեղդեմ գրկիս մէջ, և կը խընութեմ որ զիս կնքահայր ընէ։

ՏԱՖԻ. — Գնա՛ տեղդ։

ՍԱՆԹԻ. — Սատանան տանի, միթէ լո՞ւրջ ես ասում։ Հը՛մ։

ՏԱՖԻ. — Տեղդ գնա՛։ (Բոլորին) Պարո՞նա՛յք, գիտէ՞ք, այսօր լուսինը խաւարելու է։

ՄՐՎԻԾ. — Ո՞րտեղ է խաւարում ։ Ես չեմ ուզում տեսնել, ասել։

ՏԱՖԻ. — Ո՞վ է ուզում խաւարում տեսնել։

ԲՈԼՂՐԸ. — Ամե՞նքս, ամե՞նքս։

ՏԱՖԻ. — Համեցէ՛ք մեր ննջարանը, այնտեղից լաւ է երեւում։ Մտէ՛ք, մտէ՛ք։ (Կանգնեցնում է Տրիլրին և ակնջին բան է ասում)։

ՍՎԵՆ. — Է՛... ես սկսում եմ հասկանալ։

ՏԱՖԻ. — Գնա՞նք, սիրունիկս։

ՍՎԵՆ. — Ես մնում եմ, ես չեմ սիրում խաւարը տեսնել։

ՏԱՖԻ. — Միթէ՛ (ակտում է Սվենգալիի մէջը կամդել) Ա՛յ, զարմանալի բան։

ՍՎԵՆ. — Թո՞ղ ինձ, թո՞ղ ասում եմ։ (Բոլորն էլ հեռանում են բացի Բիլլիից և Տրիլրից)։

ՏՐԻԼ. — (Ազա մօսենում է Բիլլիին) Ի՞նչ էք կամենում ասել։

ԲԻԼ. — Շատ բան, բայց այժմ դուք ուրա՞խ էք։

ՏՐԻԼ. — Ես ծիծաղում եմ, որովհետեւ ուրիշները ևս ծիծաղում են։ Եթէ, նրանք լաց լինէին, ես ուրախութեամբ կը մասնացէի նրանց լացին։

ԲԻԼ. — Դուք վի՞շտ ունիք։

ՏՐԻԼ. — Իմ վի՞շտ, անբուժելի է։

ԲԻԼ. — Ի՞նչո՞ւ...։

ՏՐԻԼ. — Ես չեմ կարող...։ չեմ կամենում խօսել դրա մասին։

ԲԻԼ. — Տրիլրի, արդէն երեք ամիս է, որ դուք ինձ ճաշաչում էք։ Այդ միջոցին, ես վերաբերուել եմ դէպի ձեզ։

ինչպէս եղբայրը՝ հարազատ քրոջը։ Յիշեցէ՛ք, մեր առաջին հանդիպումը, դուք այն ժամանակ ուրախութեամբ խօսում էիք ձեր ընտանիքի մասին։ Դուք ասում էիք, որ ես շատ լաւ եմ հասկացել թէ ինչպէս չքաւորութիւնը պատճառ է դարձել ձեր անկման։ Դուք, մանուկ հասակում, ընկել էք վատ շրջանի մէջ, և դա արտաքուստ ձեր վրայ թողել է ազէտի գրոշմը, սիրտը մնացել է մաքուր։ Տեսնում էք, ես ձեզ իբրեւ բարեկամ հասկանում եմ։ Անկեղծ եղէ՛ք, ասացէ՛ք, ի՞նչն է ձեզ տանչում։

ՏՐԻԼ. — Ի. ձ համար ծանր է ապրելը։

ԲԻԼ. — Ձեզ համար դժուա՞ր է մի կոոր հաց վասարկելը . . .։ Դուք կը ցանկայի՞ք, ձեր նախկին կեանքը վարել . . .։

ՏՐԻԼ. — Ինչպէ՞ս, դուք ինձ չէք հասկանաւմ . . .։ Ես պատրաստ եմ, տասն անգամ աւելի գործել, բայց . . . եթէ կարելի լիներ մոռնալ շատ բան։

ԲԻԼ. — Շատ բա՞ն . . .։

ՏՐԻԼ. — Ո՞չ այնքան շատ, բայց այն, ինչ որ պատահել է, ես կարծես մի բան ափսոսութեմ . . . կարծես աչքերունոր են բացուած, և տեսնում եմ. թէ ո՞վ եմ ես, և ովքեր են ինձ որջապատ դները։ Ես զիտեմ ինչով այդ բոլորը կը պերջանայ։

ԲԻԼ. — Ինչո՞վ։

ՏՐԻԼ. — Ես չուտով, ա ելի եւս կ'ընկնեմ։

ԲԻԼ. — Տրիրի՛, կամանո՞ւմ էք լինել իմ։

ՏՐԻԼ. — (Վախեցած) Զա՞ր . . . ի՞ չը . . .։

ԲԻԼ. — Կասեն . . . մ էք իմ սիրուհին դառնալ։

ՏՐԻԼ. — Ո՞չ. Բիրի՛, հա կաւոր չէ։

ԲԻԼ. — Ի՞ չո՞ւ։

ՏՐԻԼ. — Միայն ո՞չ ձերը . . ., ինչ . . . դուք, ա՛իս ԲԻԼ. . . .

ԲԻԼ. — Ուրեմն գուք համաձայն չէ՞ք։

ՏՐԻԼ. — Հարկաւոր չէ, հարկաւոր չէ, Բիլի՛, ինչո՞ւ դուք . . ., մանաւանդ դուք . . ., լրկն այդ սարսափելի գեանքը . . ., ո՞չ . . ., ոչ . . ., դեռ եւս ոյժ ունեմ . . .։

ԲԻԼ. — Իսկ, իմ կինը դառնալու դուք համաձայն էք։

ՏՐԻԼ. — (յետ յաշուեղով) Դուք խելազար է՞ք։

ԲԻԼ. — Ո՞չ, սիրելիս, ես խելազար էի այն ժամանակ, երբ կասկածում էի ձեր մասին։ Ներցէք, որ թոյլ տուի ինձ, ձեզ այն տեսակ սնյալմար առաջարկութիւն անել . . . Այո՞ւ, ի՞նչ որ էլ պատահի, դուք իմ կինը կը լինէք։ Ես ձեզ սիրում եմ, մաքուր, սուրբ սիրով, և եթէ դուք էլ մի քիչ սիրում էք ինձ, ես առաջարկում եմ ձեզ իմ անուշը։ Մենք երջանիկ կը լինենք։

ՏՐԻԼ. — (Զարհուրած) Ուշքի եկէ՞ք, Բիլի՛ . . . Ե՞ս, Ե՞ս ձեր կի՞նը։

ԲԻԼ. — Ինչո՞ւ չէ՞ . . ., ես ի՞նչ գործ ունիմ ձեր անցեալին հետ . . ., իսկ դուք, ինձ հարցրե՞լ էք իմ անցեալի մասին։ Ո՞վ զիտէ, զուցէ իմ անցեալը ձերինից վատ է։ Մենք կը առեղափոխուենք Բարսելօն, ես այնուհետ պատկերներ կը նը-կարեմ, իսկ ուուք, անտեսութեամբ կը պարապէք։ Ես կը պրազուիմ ձեր կրթութեամբ, և դուք կը դառնաք բարձր գասակարգի մի տիկին։

ՏՐԻԼ. — Ո՞չ, Բիլի՛, այդ անկարելի է . . .

ԲԻԼ. — Ինչո՞ւ է անկարելի . . .

ՏՐԻԼ. — Անկարելի է, ես ձեզ համար զոյգ չեմ։ Աւելի լաւ է զիս այսպէս վերցրէք։ Ես չեմ կամննում որ դուք գժբախտանաք։ Ես պատրաստ եմ ձեզ օգտաւէտ լինելու ամէն բանով։ Ես ձեր ազախինը կը դառնամ, ես զրա համար ձեղանից ոչինչ չեմ ուզում, ո՞չ փող, ո՞չ զիրք, և ո՞չ ձեր անունը . . . Միայն, երբ որ ես մեռնեմ, օգնեցէք Ժան-Նօին և ազնիւ մարդ զարձրէք նրան . . . Ա՞չ, Բիլի՛, Բիլի՛ լայիս հ։

ԲԻԼ. — Տրիրի՛, չէ որ ես ձեզ սիրում եմ։

ՏՐԻԼ. — Դուք ինձ սիրո՛ւմ էք... ես երջանիկ եմ:

ԲԻԼ. — Տրիլի, հասկացէ՛ք ինձ, ես զրաւուած չեմ, դա
իմ առաջին լուրջ սիրելն է, ինչո՞ւ էք վախենում:

ՏՐԻԼ. — Ձեր գերախտութեան համար, կը գայ ժամա-
նակ և դուք կը զղջաք:

ԲԻԼ. — Երբե՛ք, ելդուում եմ:

ՏՐԻԼ. — Իսկ ծնողներդ, ձեր մայրը, միթէ նա կը հա-
մաձայնուի ինձ իր դուստրը կոչել:

ԲԻԼ. — Ինձ համար միեւնոյն է. դուք այժմ ինձ հա-
մար ամենամեծ թանկարժէք բանն էք, և ես ամէն ինչ կը
զոհեմ ձեր սիրոյն համար: Յետոյ, նրանք կը զգան իրանց
սիալը և կը ներեն ինձ. իսկ առ այժմ, մենք մեզ համար մի
խաղաղ բոյն կը շինենք: Կը վերցնենք մեզ մօտ ձեր ժան-
նօխն, ես նրան համար ուսուցիչներ կը վարձեմ: Առաւու-
ները ես կը նարեմ, իսկ երեկոները լաւ լաւ գրքեր կը
կարդամ ձեզ համար: Տրիլի, միթէ դա երջանկութիւն չէ:

ՏՐԻԼ. — (Լաղով) Անկարելի է այդ:

ԲԻԼ. — Դուք ինձ չէ՞ք սիրում:

ՏՐԻԼ. — Օ՛, ոչ, երդուում եմ որ սիրում եմ:

ԲԻԼ. — Ուրեմն, դուք պէտք է համուճայնուէք:

ՏՐԻԼ. — Ո՛չ, ո՛չ, չեմ կարող, այդ անկարելի է:

ԲԻԼ. — (Մօնելով դրան) Տափի՛, ե՛կ այստեղ, շուտ...
դէ՛, դու եկ, Սանթի:

ՍԱՆԹԻ. — (Մտնելով) Ի՞նչ է պատահել, սատանան տանի,
նա լալիս է:

ԲԻԼ. — Ասա՛, առա նրան, որ ես առանց նրան չեմ կա-
րող գործել, դու այդ տեսել ես: Ասա՛ նրան, որ նա ան-
պատճառ պէտք է իմ կինը դառնայ:

ՍԱՆԹԻ. — Սատանան տանի, ահա՛ թէ մինչեւ ո՞ւր է
հասել: Տրիլի՛, ես ինդուում եմ ձեր ձեռքը...

ԲԻԼ. — Ինձ համար....

ՍԱՆԹԻ. — Ներեցէ՛ք, պարո՞ն, ինձ համար... դուք ար-

ժանի չէք այդպէս գեղեցիկ աղջկան: Սատանան տանի, ես
լուրջ եմ խօսում. ցանկանո՞ւմ էք իմ կինը դառնալ....

ԲԻԼ. — (Ուրախ) Դու ուզում ես, որ ես մի պոքսով ուզ-
զեմ կերպարանքդ:

ՍԱՆԹԻ. — Տրիլի, եթէ դուք չպատասխանէք, մեղնից
մէկը կը մեռնի:

ՏՐԻԼ. — Տէր Աստուած, ես ի՞նչ անեմ:

ՍԱՆԹԻ. — Մենք սպասում ենք:

ԲԻԼ. — Տրիլի, այստե՛ղ, Սանթիի ներկայութեամբ, այս
ծննդեան գիշերը, ես խեզրում եմ որ իմ կինը լինէք...:
Եթէ մերժէք, ես վաղը իսկ կը թողնեմ Փարիզը, և երբէք
չեմ վերադառնար...: Դուք, համաձա՞յն էք:

ՏՐԻԼ. — (Լաղով) Օ՛, Աստուած իմ, ների՛ր ինձ...: Այս՝:

ԲԻԼ. — (Բոնելով նրա ձեռիվ) Տրիլի...:

ՏՐԻԼ. — Բայց, մի պայմանով, եթէ ձեր ծնողքը համա-
ձայնի...:

ԲԻԼ. — Բրագօ՛, ընդունում եմ, Տրիլի՛, իմ հոգեակս,
իմ թանկագին հարսնացուս (համբուրում է):

ՍԱՆԹԻ. — Օ՛, սատանան տանի, ի՞նչպէս թէ քոնը:

ԲԻԼ. — Իմը, իմը, ահա քեզ, զիջմանդ վարձքը (Տախու
և իր ձեռիվ):

ՍԱՆԹԻ. — Դէ՛, եթէ այդպէս է, ընդունում եմ...: Շամ-
բանեա՛..., շամբանեա բերէ՛ք...:

ՏԱՖԻ. — (Բոնելով բորդին հետ) Շամբանեա՛, ուրեմն խա-
ւարումը պէտք է վերջացնել:

ՄԻՄԻՉՈՒ. — Եւ ո՛չ մի խաւարում չկար:

ԲԻԼ. — Պարո՞նայիք, չնորհաւորեցէ՛ք...: Հարսանիք ու-
նենք:

ԶՈՒԶՈՒ. — Ո՞րտեղ է հարսանիքը:

ԲԻԼ. — Ասա՛, իմ հայրենակիցս, միս Տրիլի 0ֆէրալ, որ
երկու շաբաթից յետոյ կը դառնայ Լէյտի Բէգոթ:

ՍՎԵՆ. — Ի՞նչ ասացիք:

ՏԱՅԻ. — Նրան, ո՞վ որ կասկածում է, հրաւիրում եմ մի
փոքր պոքսի: Ո՞վ է կասկածում:

ՍՎԵՆ. — (Բարկութեամբ) Ե՞ս....:

ՏԱՅԻ. — Դո՞ւ (յարձակում է նրա լրայ):

ՍՎԵՆ. — Այսու... ես, Սվենդալիս: Բիլլին խելագարուել
է, իսկ մատմուազէլ Տրիլին, մի քիչ շտապել է,
Բիլ. — Լով'ր, Սվենդալի....:

ՍՎԵՆ. — Ներեցէ՛ք, խողագէմ բրիտանացի, դուք կանգ-
նած եք պուլտոքի ետեւ, որը սպառնում է ինձ, իր
բուռնցքով: (Տագին ուզում է յարձակուել Սվենդալիի լրայ):

ԲԻԼ. — (Խանգարում է) Տագի՛, չը շարժուեսու....:

ՍՎԵՆ. — Հիմնե՛լ..., ես պտտարաստ եմ շնորհաւորել մատ-
մուազէլ Տրիլին, երջանիկ ամուսնութեամբ, մի փոքրիկ
կատակ: Դուք թոյլ կը տա՞ք:

ԲԻԼ. — Ասա՛....:

ՍՎԵՆ. — Խնդրում եմ բոլորիդ հեռանալ, ես կամենում
եմ ասել մի միայն մատմուազէլ Տրիլին, ապագայ լէյտի
Բէգոթին:

ԲԻԼ. — Այդ աւելորդ է:

ՍՎԵՆ. — Մատմուազէլ Տրիլի, այլեւս ձեզ չեմ անհան-
գըստացնի, ձեր հարսանեաց առթիւ, այս իմ վերջին կա-
տակն է:

ՏՐԻԼ. — Թո՛ղ ասի:

ԲՈԼՈԹԻ. — (Հեռանում են բեմի խորի):

ՏՐԻԼ. — Սվենդալի..., դուք ուզում էք վրէժ առնել...,
վրէժ առէք ինձանից, մի միայն ինձանից... նա մեղաւոր
չէ: Ե՞ս, միեւնոյն է, ձեզ հետ չեմ ամուսնանա..., այդպէս
մի նայէք ինձ, ես սարսափում եմ:

ՍՎԵՆ. — Նայեցէ՛ք, այնտեղ..., պատուհանից..., դուք
տեսնում էք այնտեղ, հեռուն, փոքրիկ շինութիւն, լուսա-
ւորուած լուսնի լուսով. դա մօրկն է, ուր տարւում են
ինքնասպանների դիակները: Մի գեղեցիկ, լուսնեակ գիշեր,

ձեր մարմինը ևս կը տանեն այնպեղ, դուք պառկած կը լի-
նէք այնտեղ, երկաթէ բախտակների վրայ, ձեր մարմինը կի-
ով չափ ծածկուած կը լինի կաշուէ փոքրիկ գոգնոցով,
իսկ ձեր գլխի վրայից գիշեր ցերեկ կը հոսի սառ ջուրը, որ
կը թրսիուի ձեր ձիւնանման մարմին և սաքերի վրայ, մին-
չեւ որ նրանք կը կանաչեն: Ժողովուրդը մեծ պատուհանից
կը նայի ձեզ վրայ, և կ'ասէ. «Բայց ի՞նչ գեղեցիկ է եղել
նա...: Նայեցէ՛ք նրան, նա կարող էր իր սեփական կառքը
ունենալ»: Եւ հէնց այդ միջոցին, կը մօտենայ մի եառք,
որի մէջ նստած կը լինի մի մարդ, փաթաթուած թանկա-
գին մուշտակի մէջ, ձեռքին ահազին սիկար: Այդ մարդը կը
լինի Սվենդալին: Նա դուրս կը գայ սեփական կառքից,
ճեղքելով ամբոխը, կը մօտենայ պատուհանին, և կ'ասէ.
«Հիմնե՛լ, սա ինքը, Տրիլին է, որ ցանկացաւ մի բրիտա-
նացու կինը դառնալ, երբ ե՛ս, Սվենդալի՛ս, առաջարկու-
թիւն արի իմը լիներու: Ափեռ'ս, որ նա այժմ չի կարող
տեսնել, իր անշարժ, սառած աչքերով: Միսը կը թափուի
ձեր հրաշալի սոկոներից և ձեր փայլուն կմախքը, կը դը-
նեն ապակեայ պահարանի մէջ, բժշկական միւզէում: Իսկ
Սվենդալի՛ն, կը գայ թանկադին վերարկուով, կուրծքը և
մատները լի աղաժանդներով, նա կը նայի ձեր փոսացած
աչքերին, ձեր դաստարկ գանկին, ձեր կուրծքին, որի մէջ մի
ժամանակ բարախում էր ձեր մաքուր սիրտը: Յետոյ ուշա-
գրութեամբ կը քննէ ձեր կմախացած ոտները, և նորից կ'ա-
սէ. «Ա՛խ, ինչո՞ւ այս անմիտը ինքը վշրեց իւր մատաղ
կեանքը, երբ ե՛ս, Սվենդալի՛ս, առաջարկեցի նրան մշտա-
կան հարստութիւն՝ դափնիներով ծածկուած, նա միայն հի-

մա է բացել իր գեղեցիկ առամները որ բացականչէ. «Ավենդակիր, փրկիր, ազատիր ինձ»: Բայց արդէն ուշ էր և նրա ժպիտը սառեց ընդ միշտ :» Իմ հասցէն է՝ Տիր-Լիարդ փողոց, համար 12: Ես վերջացրի :

ՏՐԻԼ. — (Յովնած ընկերում է արոնի վրայ):

ԲԻԼ. — (Մօս վազելով) Տրիլը :

ՏԱՅԻՆ. — Էլի ի՞նչ գումարան կարդացիր նրան :

ՍՎԵՆ. — Բառեր հարսանեաց հանդէսի առթիւ, իսկ հեմա, ես պատրաստ եմ միանալ ձեր ուրախութեան : Ժէկո՛ այժմ նուագենք ի պատիւ նորահարսին, մատմուազէլ Տրիլըի համար : (Նսում է դաշնամուրի առաջ):

ՎԱՐԱԳՈՅՐ



Գ. ԱՐԱՐՈՒԱԾ

(Բեմը ներկայացնում է միեւնոյն եւսարանը: Տաֆի եւ Սանդի նկարում են: Տրիլը նսած զաների վրայ, գուշակներ և կարկտում: Քիչ յետոյ, մենում է Սվենկալի):

ՏԵՍԻԼ Ա.

ՍՎԵՆ. — Կարելի՞ է մանել այս որջը :

ՏԱՅԻՆ. — Ա՛... Սվենդալին... վերջապէ՛ս :

ՍԱՆԹԻ. — Այս ո՞ւր էիր կորել այսքան ժամանակ :

ՍՎԵՆ. — Հիմնե՛լ, բոլորը անցողական է, բացի իսկական տաղանդից, որ անմահ է...: Պօն ծուր, մատմուազէլ Տրիլըի...: Պօններ-վիդեր, ինչպի՞սի գուլպաներ են..., որ անք նմանում են գետնախնձորի տոպրակներին :

ՏՐԻԼ. — Դա՛ Տաֆիին է :

ՍՎԵՆ. — Երջանիկ մարդ, լէյտի Բէգօթը կարկըսում է կեղտոտ ներկարարի գուլպաներ, իսկ գուլք աւելի նիհարել էք. հա՛... հա՛... հիանալի է... մենք արդէն հեռու չենք մօրկից :

ՏՐԻԼ. — (Վշայի) Դուք էլի՞ եկաք ինձ տանջելու :

ՍՎԵՆ. — Կօսկեմ հիմնե՛լ, դուք կարդացե՞լ էք Ֆիլարոն, այնտեղ յօդուած կայ իմ քօնցէրդի մասին : Երէկ, ես հրաւէր ստացայ Գերմանիայից, ես և Ժէկո՛ն...: Մեզ առաջարկում են 2000 ֆրանք: Պօններ վիդեր... մի տարուց յետոյ, մեզ կ'առաջարկեն 200000:

ՏԱՅԻՆ. — Ա՛, ուրեմն դու եկել ես պարծենալու :

ՍԱՆԹԻ. — Զը համբերեցի՞ր :

ՍՎԵՆ. — Ո՛չ, ո՛չ, Սվենդալին երբեք չի պարծենում... պարծենում են միայն անընդունակ, ստախօս մարդիկ : Օ՛, եթէ մեզ հետ միանար մի անձնաւորութիւն եւս..., մենք կ'ստանայինք միլիոններ : Է՛հ... ինչ արած, հաշտուենք 200,000ով :

ՏԱՅԻՆ. — Բաւակա՞ն է ստես... : Աւելի լաւ է նստիր և նուազիր մեզ համար Շօրէնից :

ՍՎԵՆ. — (Եսում կ դաշնամուրի մօս) Ես ձեզ կը նուազեմ ձրի : (Նուազում հ) Մի տարուց յետոյ, ինձ կը հրաւիրեն պալատներում և կը նստեմ շքեզ աթոռների վրայ : Հարիւրաւոր գեղեցիկ անգլուհիք նստած կը լիսեն իմ շուրջը, ցած աթոռների վրայ, և կը հիւրասիրեն Սվենդալիին թէ թէյով, թէ քաղցրեւանիներով և թէ խորոված շաղանակներով, և կ'աշխատեն պատուել նրան, օրպէսզի նա մի անգամ ևս նուազէ նրանց համար 10,000 ֆրանքով՝ Շօրէնից : Բայց Սվենդալին ուշադրութիւն չի դարձնի նրանց վրայ, այլ նա խորասուզուած կը լիսի մօրկի և միւզէի յիշողութիւնների մէջ, ուր դրուած կը լիսի Լէյտի Բէգօթի դեղնած կմախքը :

ՏԱՅԻՆ. — Դու ուզում ես, որ ես քեզ կմա՞խք դարձընեմ : Եթէ զրա համար ես եկել այստեղ, խորհուրդ եմ տալիս վաղօրօք հեռանալ :

ՍՎԵՆ. — (Նուազը դադարելով) Օ՛, իմ սիրելի ազգ, հրաշալի ժողովուրդ, որը զիտէ պատասխանել միայն պոքսով : Սատանան ձեզ հետ... : Ես զուր տեղը չեմ եկել, որովհետեւ Բիլին տեսայ փողոցում. նա մտաւ նօտար Բամնօի մօտ : Ա՛հ, բայց ես վաղը գնում եմ Փարիզից : Ես գնում եմ Վիեննա, մօրաքրոջս մօտ :

ՏՐԻԼ. — (Վեր կենալով) Տափի՛, ես կ'իջնեմ ներքեւ, որի կին Վինարի մօտ : Երբ Բիլին վերադառնայ, դուք ինձ կը կանչէք :

ՏԱՅԻՆ. — Օ՛, մատմուազէլ Տրիլիի, ինչո՞ւ էք անձանգըստանում : Ես կը հեռանամ, ես եկայ մի բոպէով միայն, հրճուելու ձեր երջանկութեամբ... : Բայց ափսո՞ս, որ մի ուրիշ բան եմ տեսնում : Ես նկատում եմ ձեր դէմքի վրայ, մտածմունքի, վշտի, և մինչեւ անգամ սարսափի հետքեր : Մնացէ՛ք, օրիորդ Տրիլիի՛, մնացէ՛ք, ինձ այլեւս ոչինչ հարկաւոր չէ, ես հեռանում եմ :

ՏՐԻԼ. — Ո՛չ, ինչո՞ւ : Դուք, երեւի կամենում էք մեկշելուց առաջ խօսել Տափիի և Սանթիի հետ... : Ես չեմ կամենում խանդարել ձեզ : Մնաք բարեա՛ւ, Սվենդալի : (Գենում հ):

ՍՎԵՆ. — Ցաեսութիւն, մատմուազէլ Տրիլիի՛ : (Տրիլիին հեռանալոց յետոյ) Հա՛... հա՛... հա՛... : Խսկ ո՞ւր է երջանկութիւնը, Տափի՛, ո՞ւրէ երջանկութիւնը :

ՏԱՅԻՆ. — Հեռացի՞ր :

ՍՎԵՆ. — Սանթի՛, երջանկութիւնը ո՞ւր է, ես չեմ աեսնում նրան : Նա գունատու, է ինչպէս մահը և նիհար... : Ա՞, մի գուցէ նա առաւօտեան սուրճի փոխարէն քացախ է խըմել, կամ գուցէ Բիլին, արդէն սկսել է նրան կտամբել հին մեղքերի համար, ա՞... :

ՏԱՅԻՆ. — Այդ ի՞նչ անիծեալ սովորութիւն է, դու միշտ քիթդ խրթում ես այնտեղ, ուր որ քեզ չեն հարցնում : Գիտե՞՞ս, դու բաւականին զզուելի արարած ես :

ՍՎԵՆ. — Միրսի՛, մօն անգամ, գու խուսափուժ ես պատախանից :

ՏԱՅԻՆ. — Ընդհակառակը :

ՏԱՅԻՆ. — Բիլիին անահաման երջանիկ է :

ՍՎԵՆ. — Իսկ Տրիլլին :

ՏԱՅԻՆ. — Մի քիչ տկար է, ուրիշ ոչինչ :

ՍՎԵՆ. — Ստում էք :

ՏԱՅԻՆ. — Կը կորչե՞ս այստեղից, երկար պավիա՞ն, իմ համբերութիւնս սկսում է հատնել :

ՍՎԵՆ. — Ես կը կորչեմ, բայց ասէք իրրեւ աղնիւ մարդկի, դուք հաւատո՞ւմ էք որ այդ պահադրութիւնը կը կայանայ:

ԱԱՆԹԻ. — Թո՞ղ ինձ կախեն, եթէ ես այս մազմազոտ սատանային դուրս չի շպրտեմ:

ՏԱՅԻ. — Բարեկա՞մս, ես սպասում եմ Բիլիին, նա աւելի իրաւունք ունի այդ բանը անելու:

ՍՎԵՆ. — Հա՞... հա՞... հա՞..., վախեցա՞յ ձեր Բիլիից, (մօտենում է պատուհանին) թո՞ղ զայ, ես կը թքնեմ նրա երեսն: (Կը նայի պատուհանից) Ա՛, սկսուեց, փոթորիկը ըստ կը սեց, բրավօ՛, բրավօ՛:

ՏԱՅԻ. — Ի՞նչն է սկսում:

ՍՎԵՆ. — Մուտքի մօտ կանգնեց մի չքեղ կառք, նրա միջից դուրս եկան երկու ջէնդըլմէն և ուղեւորուեցին այստեղ: Օ՛, հիանալի զոյդ է: Դօններ-վիդեր, գրաւ կը գամ որ այդ կիւը էւյափ Բէգոթն է: Ես կը նուազնմ Ներոնի մուտքը: (Տաֆի եւ Սանրի բոնում են Սվենգալի վզից, եւ նետում են խորը):

ՏԵՍԻԼ Բ. — ՆՈՅՆՔ ԵՒ ՎԻՆՅՐ

ՎԻՆՅՐ — (Միջին դոնից) Պարսն Տաֆի, Տիկին Բէգոթը հարցնում է պարսն Բէլլեին: Ես ասացի, որ նա տանը չէ և Տիկինը ցանկացաւ ձեզ տեսնել:

ՏԱՅԻ. — (Բոնելով Վինարի ձեռից) Բարեկամս, կտոք նոտիշ և զնա Բիլիի նետելից: Սվենգալի, ասա՛, ո՞ր հօտարին մօտ գնաց նա:

ՍՎԵՆ. — Ձեմ յիշում:

ՏԱՅԻ. — (Բոնելով Սվենգալի կոկորդից) Առա՛...:

ՍՎԵՆ. — Խուալացւոց փողոց, Ֆուուր Ռամիօ:

ՏԱՅԻ. — (Վինարի) Վագի՛ր: (Գնում է):

ՍԱՆԹԻ. — Սատանան տանի, մի աղէտ է պատահելու: Տաֆի՛, ես կը գնամ:

ՏԱՅԻ. — Ուր:

ՍԱՆԹԻ. — Փողոց, ես վախենում եմ:

ՏԱՖԻ. — Մնա՛:

ՍԱՆԹԻ. — Բայց...:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԼԵՅՏԻ ԲԷԳՈԹ ԵՒ ԹՈՄԱՍ ԲԷԳՈԹ

ՍՎԵՆ. — (Երանց ևեսներով բազմում է վարագոյրի եւեւ): Լ. ԲԷԳՈԹ. — (Մտելելով) Մոթըր Տաֆի Ուին:

ՏԱՅԻ. — Ձեր խոնարհ ծառան: (Աերկայացնելով Սանթին) Լորտ Սանթի Կոպէն:

ԱԱՆԹԻ. — (Գլոխի տալով) Շատ ուրախ եմ, շատ ուրախ:

Լ. ԲԷԳՈԹ. — (Աերկայացնելով մըքըր Բէգորը) Թոմաս Բէգոթ: Մոթըր Բիլիի հօրեղբայրը:

ՏԱՅԻ. — (Առաջարկելով նսել) Ինգրեմ, Բիլին տանը չէ, ես մարդ ուղարկեցի նրա հետեւից, նա իսկոյն կը զայ: (Սանթին ուզում է զնազ, բայց Տաֆին բունցին է ցոյց տալու):

Լ. ԲԷԳՈԹ. — (Նսելով) Ես շատ ուրախ եմ մաթըր Ուին, որ առիթ է ներկայանում ինձ, նախ քան Բիլին տեսնելու, խօսել նրա ամենամտերիք բարեկամներին հետ: Բիլին յաճախ այնքան երձուանքով է զրել, ձեր և մաթըր Սանթիի մասին, որ ես չեմ կառկածիր ձեր անկեղծութեան՝ դէպի նա, և յուսով եմ որ իմ որդու բարեկամները, ոչինչ չեն ծածկի ինձանից...:

ՏԱՅԻ. — (Խոնարհեցնում է զնուիք յարգամոյի):

ԱԱՆԹԻ. — (Աշխատելով ազա պահել իրան) Օ՛, ի՞նչ էք առում միսիս Բէգոթ, ի՞նչ վերաբերում է ինձ...: (Տաֆիին) Տաֆի՛, ես գնամ, Բիլին շապեցնեմ:

ՏԱՅԻ. — Մնա՛...:

ՍԱԿՆԹԻ. — Հը՛մ, հը՛մ...: (Մնում է խորդում):

Լ. ԲԵԳՈԹ. — Մոթը Տափի, մենք սարսափելի դրութեան մէջ ենք: Ես ստացել եմ երկունամակ, մէկը Բիլիից, ուր նա գրում է որ Ծննդեան զիշերը առաջարկութիւն է արել մի զեղեցիկ, համեստ օրիորդի, իսկ միւս նամակը անբարագիր է, բայց այդ նամակում այն պիսի բաներ կան, և դուք ինձ կը բացատրէք, թէ որքան ճիշդ են այդ նամակները:

ՏԱՅԻ. — Բարի եղէք, և յայտնեցէ՛ք ինձ նրանց բովանդակութիւնը:

Լ. ԲԵԳՈԹ. — Ըստ երկորդ նամակի, միս Տրիլի Օքէրալը պատկանում է բոլորովին ուրիշ շրջանի: Դուք ձանաչում էք այդ աղջկան:

ՏԱՅԻ. — Ի հարկէ, ես նրան շատ լաւ եմ ձանաչում:

Լ. ԲԵԳՈԹ. — Նա անգլուհի՞ է:

ՏԱՅԻ. — Այո՛, որքան ինձ յայտնի է, նա անգլիահպատակ է:

Թ. ԲԵԳՈԹ. — Բողոքակա՞ն է, թէ կաթոլիկ:

ՏԱՅԻ. — Հը՛մ..., ճիշդը..., ես այդ մասին ոչինչ ը զետեմ:

Թ. ԲԵԳ. — (Նեղացած) Ինչպէ՞ս, դուք ասում էք լու եմ ձանաչում նրան, բայց մինչեւ անգամ այդ էլ չզիտէք:

ՏԱՅԻ. — (Լարուած լուսի հ):

Լ. ԲԵԳՈԹ. — Նա լէյդի՞ է, մաթը Ուին:

ՏԱՅԻ. — Ինչպէ՞ս ասեմ..., Այդ կախուած է նրանից,

թէ դուք ինչպէս էք ընդունում այդ խօսքը..., գլուխ՝ կարծիքները զանազան են լինում...: (Նկատելով որ Ասերին յիայ) Փախաւ, անիրաւը:

Լ. ԲԵԳՈԹ. — Բայց ...:

ՏԱՅԻ. — Նրա հայրը, ջէնթըլմէն է եղել:

Լ. ԲԵԳՈԹ. — Իսկ, նրա մայրը:

ՏԱՅԻ. — Ես մօրը մասին ոչինչ գիտեմ:

Թ. ԲԵԳՈԹ. — Իսկ ինքը, միս Տրիլիին ինչ է, դաստիարակուհի՞ է, կամ սրա նման մի անձնաւորութիւն:

ՏԱՅԻ. — Ո՛չ, բոլորովին դրա նմանը չէ: (Նայելով յու կողմը): Ա՛խ, դու շուդլանտական սրիկա՛յ:

Լ. ԲԵԳՈԹ. — Նշանակում է, նա իր սեփական միջոցները ունի:

ՏԱՅԻ. — Ներեցէ՛ք, լէյդի, ես այս զգեստով... իսկոյն կը զայ Բիլին... ես հագուստներս փոխեմ:

Լ. ԲԵԳՈԹ. — Ա՛խ, ոչինչ, ես հասկանում եմ, դուք աշխատում էք: Բայց, ասացէք, ո՞վ է նա վերջապէս: Յոյս ունիմ որ այդ աղջիկը արժանի է յարգանաց:

ՏԱՅԻ. — Այժմ նա լուացարարուհի է, նա տանդէլներ լուացող է...: Այս արհեստը բաւականին յարգուած է այս-աեղ:

Լ. ԲԵԳՈԹ. — Ի՞նչ, նա լուացարարուհի է՞:

ՏԱՅԻ. — Այո՛, նա լուացարարուհի է, բայց եթէ գուք նրան տեսնէք, չէք ասեր որ նա լուացարարուհի է:

Լ. ԲԵԳՈԹ. — Միթէ նա այնքոն զեղեցի՞կ է:

ՏԱՅԻ. — Այո՛, նա զեղեցիկ է: Դրանում կասկածելը աւելորդ է:

Թ. ԲԵԳՈԹ. — Բայց, թոյլ տուէք հարցնել, այդ աղջիկը անքի՞ծ է:

Լ. ԲԵԳՈԹ. — Ինչպէ՞ս, դուք դժուարանում էք պատասխանել, մաթը Տափի:

ՏԱՅԻ. — (Մրցելով ճակատին թրիելը) Ո՛, միսիս ԲԵԳՈԹ... դուք ինձ անել դութեան մէջ էք դնում: Ես, սիրում եմ ձեր որդուն, բայց միեւնոյն ժամանակ, թէ ես և թէ Սան: Թին համարանքով ենք նայած դէկի Տրիլի Օքէրալը, թէեւ, ի՞նչ կարիք կայ ծածկելու հասրակական կարծիքը նրա մասին..., նա առաջ մօտէլ է եղել...:

Լ. ԲԵԳՈԹ. — Մօտէ՛լ, բայց ինչպիսի՞ն..., մօտէ՛լները
զանազան են լինում:

ՏԱՅԻ. — Այո՛, մօտէ՛լ, բառին բուն նշանակութեամբ:

Լ. ԲԵԳՈԹ. — Մարմի՞ն համար:

ՏԱՅԻ. — Այո՛:

Լ. ԲԵԳՈԹ. — Կը նշանակէ ճիշդ են բոլորը: Այդ սարսա-
փելի է, սարսափելի է: (Ցուգում ի):

Թ. ԲԵԳՈԹ. — Հանդարտեցէ՛ք միսիո ԲԵԳՈԹ, այդ բո-
լորը դեռ կարելի է ուղղել:

Լ. ԲԵԳՈԹ. — Մսթըր Ուին, եթէ դուք իմանայիք թէ
ինչ է իսձ համար իմ որդին: Նախ քան այս ապականուած
քաղաքը դար, նա իր ամբողջ կեանքը մեզ հետ է անցրել:
Ես վստահ էի որ այլեւս ո՛չ ոք նրան չի կարող յեղել ճա-
նապարհց: Ահա՛, թէ ես ինչո՞ւ համաձայնեցի որ նա դայ-
այտեղ...: Օ՛... ես անխելքս, անխելքս:

Թ. ԲԵԳՈԹ. — Սիրելի՞ն, հանգստացիր:

Լ. ԲԵԳՈԹ. — Մսթըր Ուին, աղաջո՛ւմ եմ, օգնեցէ՛ք մեզ
որ մի կերպ ազատենք իմ Բիլիին:

ՏԱՅԻ. — Օրիորդ Տրիրին ընդունել է Բիլիի առաջար-
կութիւնը այն պայմանով միայն, որ երբ դուք համաձայ-
նուեք:

Լ. ԲԵԳՈԹ. — Այո՞...:

ՏԱՅԻ. — Ես ձեզ խորհուրդ կը տամ, խօսիլ իրան
օրիորդ Տրիրիի հետ, և ես վստահ եմ որ նա հրաշալի ար-
դաւորութիւն կ'անէ ձեր վրայ:

Թ. ԲԵԳՈԹ. — Նա գեղիցի՛կ է, ուրիշ ոչի՞նչ:

ՏԱՅԻ. — Նա մաքուր ոիրա ունի, միախ ԲԵԳՈԹ, և ես
ափսոսում եմ նրան:

Լ. ԲԵԳՈԹ. — Որ նա ամուսնանո՞ւմէ իմ որդու հետ:

ՏԱՅԻ. — Օ՛, ափսոսում եմ, որ նա չի ամուսնանալ:

ՏԵՍԻԼ Դ.

ՆՈՅՆՔ ԵՒ ՏՐԻԼԲԻ (Բաղիսում և դուռը)

ՏԱՅԻ. — Ո՞վ է այդտեղ:

ՏՐԻԼ. — (Կանաց դուռը քանալով) Սվենգալին գնա՞ց:

Լ. ԲԵԳՈԹ. — Դուք մի՞ Տրիլիք Օգէրա՞ն էք:

ՏՐԻԼ. — (Ծփորած մատերով) Այո՛, այո՛, ես Տրիլիք Օֆէ-
րան եմ...: Իսկ դուք, միսիո ԲԵԳՈԹն էք... այնպէս չէ՞:

Լ. ԲԵԳՈԹ. — Այսդ է... դուք շատ գեղեցիկ էք:

ՏՐԻԼ. — Ես մի անգամից ձեզ ճանաչեցի... դուք այն-
պէս նման էք Բիլիին:

Լ. ԲԵԳՈԹ. — Բայց...:

ՏԱՅԻ. — Տրի բի՞...:

ՏՐԻԼ. — Օ՛, դուք իսկական ջէնթըլմէն էք: (Ամաչերով
դուռը ի):

Լ. ԲԵԳՈԹ. — Դուք մօտէ՛լ էք եղել:

ՏՐԻԼ. — Այո՛:

Լ. ԲԵԳՈԹ. — Այժմ, լուացարարո՞ւհի էք:

ՏՐԻԼ. — Ես լուանում եմ տանդէլ և պարիսդ:

Լ. ԲԵԳՈԹ. — Եւ դուք ցանկանում էք իմ որդու կինը
դառնա՞ւ:

ՏՐԻԼ. — (Ծփորուած) Ես այդ չէի ուզում:

Լ. ԲԵԳՈԹ. — Ինչպէս:

ՏՐԻԼ. — (Ծարունակում ի) Ես գիտեմ, որ նրան յամար-
գոյդ չեմ, ես մերժեցի, բայց շա երգուեց, որ կը հեռանայ
ընդ սիշտ Փարիզից, եթէ չը համաձայնուեմ, և ես քաջու-
թիւն չունեցայ ընդդիմունալու:

Լ. ԲԵԳՈԹ. — Միթէ դուք այդքան շա՞տ էք միրում
նրան:

ՏՐԻԼ. — (Զարմացած) Սիրում էի ես նրան, իսկ դուք ք

Լ. ԲԷԳՈԹ. — Ես նրա մայն եմ, դուք ինքներդ խոստովանեցաք որ յարմար զոյդ չէք իմ որդու համար, և եթէ... դուք սիրում էք նրան, ապա ի՞նչպէս էք թոյլ տակիս ձեղ խայտառակել նրան, անջատել իւր ընտանիքից, իր քարեկամներից:

ՏՐԻԼ. — (Սարսափած՝ Տագիին) Միթէ այնպէս է:

ՏԱՅԻ. — Դործը ուրիշ ընթացք է ընդունում, իսկ ես քրաւունք չունեմ, որովհետեւ այս ականակ ընտանեկան գործերում օտար մարդ չպիտի խառնուի. բայց, ինձ ներեցէ՛ք, քանի որ դուք ինքներդ դիմոցիք ինձ: Դուք անարզում էք ինեղձ աղջկան՝ միայն նրա համար, որ մինչեւ այժմ նըրան զրագարտող մարդիկ սրիկաներ էին: Ներեցէ՛ք իսկստ ուճիս համար, բայց միթէ դուք համոզուեցա՞ք, որ այս աղջկը արժանի չէ ձեր որդուն: Ահա՛, նա ձեր առաջ է, նաշեցէք նրա աշքերին, միթէ նրանք կարո՞ղ են խարել: Զըննեցէ՛ք նրա հոգին, նա բացուած է վարդի նման, արդեօք մի որ եւ իցէ բիծ կը գտնէ՞ք դուք այնտեղ:

ՏՐԻԼ. — Տագի, չի հարկաւոր:

ՏԱՅԻ. — Միսիս Բէգոթ, ես Տագի Ռւին, Լորտ Ռ. ինի որդին, ես ձեղ ասում եմ, եթէ Տրիլիք Օֆէրալը ձեր որդու հարմացուն լիներ, ես գոհութիւն կը մատոցանէի Աստծուն, եթէ միս Տրիլիք արժանացնէր ինձ այդ պատին, համաձայնուեր դառնալ իմ կինը...: Ահա՛ բուռը, ինչ որ ես կարող էի ասել:

Լ. ԲԷԳՈԹ. — Օ՛, մսթը Ռւին:

Թ. ԲԷԳՈԹ. — (Հեղօրին) Ի՞նչ կայ որ, այժմ երբ մեր գործը վերջացած է, այլեւս արգելք չը կայ, եւ ես չեմ կասկածում միս Տրիլիք համաձայնութեանը վրայ:

ՏԱՅԻ. — Դուք շատ բարի էք, մսթը Բէգոթ, չափազանց բարի էք: Ռւիլին, թոյլ տուէք ասել, որ ես այնպէս ամպանդաւոր չեմ, ինչպէս ձեր եղբօրորդին, ես կարգուի աներկել անել այդ բայլը, այդ ո՛չ ոքի դործը չէ:

Ա. Կրկնում եմ. Եթէ Տրիլիքն զգար դէպի ինձ գոնէ մի համարերորդ մասը այն սիրոյն, որ նա զգում է դէպի ձեր եղբօրորդին, այն ժամանակ, ես ուրախութեամբ կը միացնէի իմ կեանքս նրա հետ յաւիտեան...: Հաղարից միայն մէկը կարող է լինել Տրիլիքի նման: Համկանո՞ւմ էք դուք:

Թ. ԲԷԳՈԹ. — Ինչպէս չէ, չեմ հակառակի. հասարակութիւնը այլ կերպ է նայում, իսկ մենք հասարակութեան հետ Անք ապրում:

ՏՐԻԼ. — (Վեր կենալով բազկարողից) Տագի՛, բաւական է, Չնորհակալ եմ: (Համբուրում և նրա ձեռքը):

ՏԱՅԻ. — Տիլը...:

ՏՐԻԼ. — Ամէն ինչ ասուած է, Միսիս Բէգո՛թ, հանդարանցէ՛ք, ես նոյնպէս ջէնդըլմէնի աղջկէնեմ, ձիշդ է, իմ հայրս մեռաւ չքաւորութեան մէջ, որովհետեւ ինքնասիրութիւնը թոյլ չտուաւ ողորմութիւն ինդընելու...: Ես նոյնպէս անգլուհի եմ, միսիս Բէգոթ և այն էլ բարձր շըջանից...: Բայց կարիք չկայ գրանով պարծինալու: Ինձ կարելի է վիրաւորել, չնորհիւ իմ անցեալին, ես արժանի եմ ձեր վիրաւորանքներուն: Ես ուզում էի ինձ համար նոր կեանք ստեղծել, ես ուզում էի նուիրուիլ ԲՌԱԼիին: Բայց պէտք է հաշտուել, պէտք է մի կերպ քարշ տալ այս կեանքը, չէ որ նա կարծատել է: (Զայկերով արտասովը, դիմում և դէկալի մուտքը):

Լ. ԲԷԳՈԹ. — Սպասեցէ՛ք, սիրելի օլիորդ... ես ուզում եմ ձեղ բացատրել...:

ՏՐԻԼ. — Հարկաւոր չէ, արդէն ամէն ինչ ասուած է, ես ինքս էլ համկանում եմ, որ դրանից լաւ բան չի դուրս գալ...: Ես չափազանց տանջւում եմ, բայց աւելի կը տանջուէի, երբ զգայի որ նրան գժբախտացրել եմ իր կինը մինելով: Այս, ես երբէ՛ք չեմ կարող լէյտի դառնալ, ես ամենքի համար մօտէլ եմ և լուացարարուհի..: Մնաք բարով, միսիս Բէգոթ, ես չեմ ամուսնանալ ձեր որդուն հետ, կարող էք վստան մինել, նա ինձ այլեւս չի տեսնի: Ես նրան

մի քանի խօսք կը գրեմ... չէ՞ որ նա իսկոյն և եթ կը գայշ-
Դեռ ժամանակ կայ, մնաք բարեաւ, միսիս Բէգոթ, նա լաց
կը լինի, դուք նրան կը միխթարէք: Տափի՛, չէ՞ որ դուք
նրան չէք թողնի: Աստուած իմ, Տէր Աստուած, որքան
սարսափի՛ ի է այս բոլորը, ասացէք նրան, Տափի, որ ես
նրան չէի սիրում, որ ես ուզում էի միայն լէյտի դառնալ...
օգնեցէ՛ք նրան, որ ինձ մոռանայ, իսկ ես...: Մնա՛ք
բարեաւ...: (Վազում է աց կողմը):

Լ. Բէդ.— (Զգացուած) Խե՛զն աղջիկ... նա իրաւի
սիրում է որդուս:

Թ. Բէդ.— Բայց... համոզուած եմ որ դուք չէք
համաձայնի այդ ամուսնութեան:

Լ. Բէդ.— Ո՛հ, ի հարկէ... բայց չէ որ հարկաւոր է
նրան մի կերպ միխթարել:

Թ. Բէդ.— (Տափիի կողմը՝ հեղաշոր) Ախիթարու-
թիւն կը գտնուի:

Լ. Բէդ.— Այո՛, եթէ յանկարչ նա ակրսուայ... հան-
դիպէ Բիլիին..., Բիլին կարող է շուտով գալ, իսկ նա-
դեռ այստեղ է:

Թ. Բէդ.— Մի գումար առաջարկենք նրան:

Լ. Բէդ.— Դուք կարծո՞ւմ էք որ նա կը նդունէ: Ես
պատրաստ եմ տալ ինչքան որ ուզում է: (Հանում է խակը):

Թ. Բէդ.— Այստեղ որքան կայ:

Լ. Բէդ.— Չորս հարիւր ֆունտ սղերլինդ:

Թ. Բէդ.— Կէսն էլ բաւական է...: Մոթըր Տափի,
դուք շտապեցրէ՛ք միսիս Տրիլիին:

ՏԱՅԻ.— (Զպակելով կատարութիւնը) Յետ զրէ՛ք այդ վողե-
րը և շտապեցէ՛ք ինքներդ, հասկացա՞ք, ուր՞:

Թ. Բէդոթ.— (Յետ յաշելով ձեռից) Հասկացայ, մոթըր
Ուին, շատ լաւ հասկացայ, բայց և այնպէս, Բիլիին շաս-
կեղեցիկ շրջանի մէջ է գտնուած, դուք շատ անբախտ մայր
էք, միսիս Բէգոթ:

Լ. Բէդոթ.— Այս, ես, այնպէ՛ս սիրում եմ նրան: ՏԱՅԻ.— Այո՛, դուք չափազանց սիրում էք նրան, չնոր-
հաւորում եմ ձեզ և ձեր սատկառելի եղբօրը լիակատար
յաջողութիւնը, բայց ի՞նչ վերաբերում է Բիլիին, չը գիտե՞մ,
արդեօք կարելի՞ է նրան էլ չնորհաւորել:

Լ. Բէդոթ.— Մոթըր Ուին, դուք պէտք է մտնէք մեր
դրութեան մէջ...: Մտածեցէ՛ք, ի՞նչ հետեւանք կունենար
այդ ամուսնութիւնը...: Ինչպէ՛ս գեղեցիկ է նա, և որքան
բարեսիրա: Վարձատրութիւնը նրան չէր կարող բաւարա-
րութիւն տալ: Դուք ինձ ներո՞ւմ էք, մոթըր Տափի:

ՏԱՅԻ.— (Սառն կերպով) Օ՛, միսիս Բէգոթ, իմ ներման
մասին խօսք անգամ չի կարող լինել:

Լ. Բէդոթ. (Անհանգիս) Այո՛, այո՛, բայց ինչո՞ւ նա չէ
հեռանում: Գնա՞նք մոթըր Բէգոթ, սպասենք Բիլիին կառ-
քի մէջ և մեզ հետ տանենք: Իսկ, այդ խեզն աղջկայ նա-
մակը դուք մեզ կուղարկէք այսօր և եթ: Մնաք բարեաւ,
մոթըր Ուին, իմ տունո միշտ բաց է ձեզ համար:

Թ. Բէդոթ.— (Վասանելով ձեռից տակի և Տափիին) Մնաք
բարեաւ մոթըր Ուին:

ՏԱՅԻ.— (Չեռից գրասնիլ պահելով) Մնաք բարեա՛ւ, ուր...
Թ. Բէդոթ.— Բայց... հըմ... հըմ... (գնում է):

ՏԱՅԻ.— (Միաժամանակ յուզուած ման է զայխ, յեսոյ
մածամանց միջ կանգ է առնում, յեսոյ մօսենում է դրան) Տրի-
լի, դուք գո՞ւմ էք..., դէ՛, Աստուած ձեզ հետ, գրեցէ՛ք:
(Հեռանում, մի փոքր մասնում, յեսոյ բացականչում է) Մատա-
նան ինձ տանի, եթէ թոյլ տամ որ Բիլիին տանեն: Այդ
արդէն չափեց դուրս է: (Արագ դուրս է գնում միջին դունու):

ՍՎԵՆ.— (Դուրս զաղով վարագոյրի յետելից, յուզուած մի
յանի յայլ է անում, յեսոյ արագ բագնում է շիրմայի յետը և
ճախ պատուհանի մօս):

ՏՐԻԼ. — (Տարանուելով դուրս և զայիս նամակը ձեռին, որը դնում է մի յայտնի տեղ, յետոյ բայցերը արագացնելով մտնում են պատուհանից ձախ, բաց և անում եւ ուզում է այժմելով դուրս բռչել):

ՍՎԵՆ. — (Երա ձեռից բռնելով) Սպասեցէ՛ք: (Տրիլին ուզում է ազատուել):

ՏՐԻԼ. — Թողէ՛ք ինձ..., ա՛հ, թողէ՛ք ինձ:

ՍՎԵՆ. — Երբէ՛ք... մեռնի՛լ, վաղ է, օրիորդ Տրիլի՛, չափազանց վաղ է:

ՏՐԻԼ. — (Աշխատում է պրծել) Թողէ՛ք, միեւնոյն է, ես ինձ կ'սպանեմ, դէ՛, թողէ՛ք ինձ, օ՛հ..., Աստուած իմ, Աստուած իմ:

ՍՎԵՆ. — Յիշում էք, ի՞նչ էի ասում ձեզ, մօրկի առթիւ: Ա՛, ի՞նչ է, Սվէնդալին ստում էք: Հիմմի՛լ... ջարդել, վճացնել ձեր գեղեցիկ մարմինը, եօթերորդ յարկից ընկնելով, փշել ձեր հրաշալի գանկը... ողողել ձեր արեամբ այդ կեղաստ փողոցը, որի վրայով անցնում են խողադէմ բլուկները: Վերջապէս, ոչնչացնել այն Աստուածային գործքը, որը կարող էր հնչեցնել հրեշտակային մեղեղիներ: Այսո՛, փշել նրան, երբ որ կենդանի է այնպիսի արթիսթ, Սվէնդալին: Ո՞վ է մեզանից խելագարը...: Դօններ-վիդիր, եթէ այդ պատահելու լինէր, ես ի՞նքս կ'ընկնէի այստեղից, բայց Սվէնդալին դեռ ուզում է ապրել, նա պիտի ապրի, որովհետեւ նրա հետ կարող է մեռնել բկէ-կանօն: Տրիլի՛, Տրիլի՛, ուշքի եկէ՛ք, ապազան մերն է:

ՏՐԻԼ. — Ես ոչինչ չեմ ուզում, ես չեմ կարող ապրել, հասկացէ՛ք, ես չեմ կարող ապրել, ես նրան այնպիս եմ սիրում:

ՍՎԵՆ. — Այսո՛, դուք նրան սիրում էք, ուրեմն ստիւլիցէ՛ք բոլոր այդ ոսկեզօծ անասուններին, խոնարհել ձեր առաջ, կուլ տալ ձեր ոսքերի փոշին: Մեղանից ամէն մէկը, որը

մեծացել է աղքատութեան մէջ, պիտի մաքառի նըանց հետ, որոնք իրանց մեղանից բարձր են համարել որովհետեւ միջոց են ունեցել հազնել թանկագին զգեստներ, երբ մենք փաթաթուած ենք ցնցոտիների մէջ: Իսկ ինչո՞վ մենք կարող ենք յաքառել տաղանդով...: Դրէ՛ք ձեզ ամբոխից բարձր, դուրս եկէ՛ք բեմ և մենք ցոյց կը տանք նրանց թէ ի՞նչ բան է Բէլ-կանօն, և բոլոր այդ երկարականջ, անընդունակ յիմարները ծունկ կը չոփեն...: Տաղանդը, ամբոխի թագաւորն է, որքան նա ուժեղ է, այնքան աւելի է իշխում: Դուք և ես, կարող ենք կազմել մի ա'յնպիսի տաղանդ, որի նմանը երբե՛ք չի եղել...: Դուք միջոց ունիք, ես ուժ, դուք զործիք էք, ես երաժիշտ: Ես իմ ամբողջ ուժը կը նուիրեմ ձեր կոկորդին, և նա ա'յնպէս կ'երգի, ինչպիսին դեռ ոչ ոք չի լսել...:

ՏՐԻԼ. — Ո՛չ, ո՛չ..., ես չեմ կարող ապրել, իմ սիրոս յափշտակեցին:

ՍՎԵՆ. — Տրիլի՛, ժամանակը թանկ է, նրանք ամէն մի բոլէ կարող են գալ... գնա՞նք, ինձ հետ, ես կը լինեմ ձեր հաւատարիմ ծառան, ձեր ուսուցիչը, մենք կը նուածենք ամբողջ աշխարհը: Երդւում եմ իմ Աստծով, իսկ իմ Աստուածը ուժեղ է և զարհուրելի, նա չի խնայի՛ր ուխտադրուժներին:

ՏՐԻԼ. — Սվէնդալի՛, այդ բոլորը զառանցանք է, երազ է:

ՍՎԵՆ. — Իսկ դուք մտածել էք ձեր եղօր, Ժամանօի մասին:

ՏՐԻԼԲԻ. — (Վեր բռյելով) Ժամանօ՛:

ՍՎԵՆ. — Այսո՛, Ժամանօ, խեղճ երեխան կը մեռնի քաղցից, կամ կ'ապրի ձեղ ոպաննողների հաշւին...: Մենք կը տանենք նրան մեզ հետ... ես նրա մասին հոգ կը տանեմ, ինչպէս հարազատ որդուս վրայ:

ՏՐԻԼ. — Ժամանօ... իմ ին՛զն, իմ սիրելի Ժամանօ...: Ա՛խ, վերջացրէք ինձ հետ, ինչպէս կամիք, միայն թէ չի

թողնէք ինեղճ ժաննօին և ես, ես... կարողացայ մոռնալ
նրան...: Օ՛..., Աստուած իմ, գնա՞նք այստեղից, գնա՞նք,
շուտ տարբէք ինձ: Ես ոչ ոքին չեմ ուզում տեսնել:

ՍՎԵՆ.— Վերջապէ՛ս. օ՛, Տրիլըի, դուք չեք զզջայ ա-
պագայում... (Բիզի ձայնը) Բիլլի՞ն... ուշ է... այստեղից չի
կարելի դուրս գնալ: Դուք փող ունէ՞ք:

ՏՐԻԼ.— Ո՛չ:

ՍՎԵՆ.— (Գրպանից հանելով փողը) Վերցրէ՛ք այս տասը
ֆրանքը... դուրս եկէք յետեւի դռներով, վերցրէք կառք,
մինչեւ հրւսիսային կայարան և այնտեղ սպասեցէ՛ք ինձ:
Որտե՞ղ է ժաննօն:

ՏՐԻԼ.— Կոլոմորս քեռու մօտ:

ՍՎԵՆ.— Լաւ, ես կը գնամ նրա ետեւից, երեք ժամից
յետոյ գնացքը մեղ կը թոցնի Գերմանիա: Մի փոքր աշ-
խատանք, և յաղթութիւնը մերն է:

ՏՐԻԼ.— Ինձ համար միեւնոյն է, իմ կեանքս վերջացաւ:

ՍՎԵՆ.— Այդ գեռ կը տեսնենք: Մեղ միասին չպիտի
տեսնեն: Ես կը մնամ, որպէսզի նրանց չփոթեմ: Շտապեցէ՛ք:
Տրիլըի, չի զդջա՞ք:

ՏՐԻԼ.— Ո՛չ:

ՍՎԵՆ.— Տրիլըի, սիրո՞ւմ էք ինձ:

ՏՐԻԼ.— Այո՞...:

ՍՎԵՆ.— Գնացէ՞ք:

ՏԵՍԻԼ Զ.

ԲԻԼ.— (Ներս վազելով) Տրիլըի... Տրիլըի...:

ՍՎԵՆ.— Սպասի՛ր, խոզադէմ Բրիտանացի, ահա՛ Տրիլ-
ըի նամակը:

ԲԻԼ.— Նամա՞կ... (Կարդում է նամակը, յետոյ ուշարափ
ընկնում է) Ահ, Տափի, Տափի...:

ՎԱՐԱԳՈՅՐ

Դ. ԱՐԱՐՈՒԱԾ

(Թատրոնի մը խոցը: Աեղանին վրայ պնակ մը, դանակ
եւ պատառափաղ: Բեմին վրայ կան Ձրանեկի եւ Ժկկո: Վա-
րագոյցը բացուելիս ներս է մտնում Զաներին):

ԶԱՆ.— Ինչպէ՞ս են գործերը:

ԺԵԿ.— Դուրս չի եկել գեռ բրօքէսէօրը:

ԶԱՆ.— Իսկ կօնցէրդը կը կայանա՞յ:

ԺԵԿ.— Զը գիտեմ:

ԶԱՆ.— Ժողովուրդը հաւաքուել է...: Ի՞նչ է պատահել:

ՏԻԿԻՆԸ հիւա՞նդ է:

ԺԵԿ.— Զը գիտեմ:

ԶԱՆ.— Ա՛... սատանան տանի քեզ: Ֆրանկէ՛լ, գոնէ
դուք պատմեցէք, ի՞նչ է պատահել, ես ամբողջ օրը գրա-
ւենեակից դուրս չեմ եկել:

ՖՐԱՆ.— Ապտակ են տուել:

ԶԱՆ.— Ինչպիսին:

ՖՐԱՆ.— Երեւի ծանր:

ԶԱՆ.— Դէ պատմեցէ՛ք, ի սէր Աստծոյ:

ՖՐԱՆ.— Դեռ քեզ էլ կառավարիչ են կոչում, բոլորը
պիտեն... ամբողջ քաղաքը դիտէ: Երեկոյեան լրագրի մէջ
մանրամասն նկարագրուած է:

ԶԱՆ.— Բայց ի՞նչպէս:

ՅՐԱՆ. — Այդ էր որ, Սվենդալին փորձի ժամանակ մաներ գալիս կատաղի առիւծի նման։ Ծեծեց կնոջը, երաժշտակարին նոյնպէս։

ԶԱՆ. — Իսկ ինձ չէ՞ք հաշւում։

ՖՐԱՆ. — Ինչպէս, ձեզ է բաժին հանել։

ԶԱՆ. — Ինչպէս չէ։

ՖՐԱՆ. — Ոյդպիսի օվացիաներ երբեք չէինք տեսել, ո՞չ զերլինում և ո՞չ էլ վիճնայում։ Փարիզիք գժուել են։

ԶԱՆ. — Իսկ կոնցէրդը կը կայանա՞յ։

ՖՐԱՆ. — Չգիտեմ, հարցրո՞ւ իրան, Սվենդալիին։

ԶԱՆ. — Անտանելի բան է խելագար խմբապետի մօտ ծառայելը։

ՏԵՍԻԼ Բ. — ՆՈՅՆՔ ԵՒ ՍՎԵՆԴԱԼԻ

ՍՎԵՆ. — Մէկ ապտակը քեզ քիչ է, ա՞...։

ԶԱՆ. — Գուցէ մէկ ուրիշի համար քիչ է, բայց ինձ համար բաւական է։

ՍՎԵՆ. — Անպիտան անասո՛ւն, ես քեզ ցեխից դուրս քաշեցի, ես քեզ հաղցրի պատշաճապէս, քո անպիտան փորի վրայ քաշուած է ոսկի շղթայ։ Իսկ ի՞նչ էիր դու առանց ինձ, ջնուտի մակլէտ, որը ծախում է հոտած ձուկ...։ Ես կը փշեմ քո բոլոր ատամները, եթէ դու կը համարձակուեն մի խօսք եւս առել։

ԶԱՆ. — (Վախեցած) Ես լռում եմ։

ՍՎԵՆ. — Դնա՛ տեղը։ (Զաներին արագ դուրս է գնում) Իսկ դո՞ւք, ի՞նչ էք շինում այդտեղ։

ՖՐԱՆ. — Մենք լսեցինք որ կոնցէրդը չի կայանար...։ Զանէթին ասաց։

ՍՎԵՆ. — Ի՞վ է ձեր պարոնը, Զանէթթին, թէ՞ ես...։ Ո՞վ է ձեզ մէկի տեղ երկուս ոռծիկ վճարողը, Զանէթթի՞ն։ Սրիկանե՛ր, դուք ուղում էք փսղեր ստանալ և յետաձգելու

ձրիակերնե՛ր, ի՞նչ էիք դուք առանց ինձ, ո՞վ ձեզ մարդ շինեց։ Դո՞ւք ջնուտների հարսանիքից ընկել էք կոնցէրդի դահլիճը։ Ես ձեզ տուի իմ սիրու, ես ձեր ամէն մէկի տաղանդը օձիքից բոնած դուրս եմ քաշել, իսկ դո՞ւք. ձեր մէջ մի հաւատարիմ մարդ չկայ, բոլորդ էլ դաւաճաններ էք՝ պատրաստ ծախելու ձեր տիրոջը։ Կոպէկների փոխարէն։ Ֆրանկէլ, դու ի՞նչպէս էիր նուազում Մօտէրատօն։ Ա՛..., Սվենդալին երկու ականջ ունի, բայց նրա ականջները չորս են ամէն մէկիդ համար...։ Ժէկկօ', գրիբ քսան ֆրանք տուգանք. Ֆրանկէլ, փոխարինիր ժէկկօին...։ Ակսեցէ՞ք պարեւքից։ (Զաներին եւ Ֆրանկէլ դուրս են գնում) Ա՛, ժէկկօ', ժէկկօ', ես ինձ վատ եմ զգում, շատ վատ։

ԺԷԿ. — Դու ի՞նքդ ի զուր տանջում ես և նրան էլ ես տանջում։ Ամէն ինչ լաւ էր զնում։ Երէկուայ օվացիաներին պէս երբեք չի եղել։

ՍՎԵՆ. — Զի եղել, ես գիտեմ որ չի եղել...։ Իսկ դուշը կարծում ես դադարել է այրուել Բրիտանացու ապտակից։

ԺԷԿ. — Կ'անցնի, կը մոռանաս։

ՍՎԵՆ. — Այո՛, իսկ լրագիրները կը մոռանա՞ն։ (Զաների լի լրացիր) Իսկ այս ի՞նչ է նշանակում. «Անկարգութիւն փոստային գրասենեակում»։ յայտնի Սվենդալին ապտակ ստացաւ»։ Ա՛, յօններ-վիրեհ...։ Ես 10,000 ֆրանք վճարեցի, որ լռեն թշթակիցները, բայց անա՛, մի անպիտան, փողոցային թերթ, որի մէջ փաթաթում են հոտած ձուկեր, կեղտոտում է ինձ, և այդ անպատութիւնը չի կարելի մաքրել ամբողջ կեանքում։ Երէկ ծաղիկներ էին թափում մեզ վրայ, բայց ամէն մի ծաղկի թերթի մէջ ես զգում էի բրիտանացու ապտակը...։ Դու կարծում ես թէ ես չեմ հասկանում որ ի՞նչո՞ւ են հաւաքուել երեքն էլ միասին...։ Տեսնե՞նք, տեսնե՞նք թէ ինչպէս նրան կը խլեն ինձանից...։ Բայց, լա՛ թքեցի նրա երեսին, հա՛, հա՛, հա՛։ Մենամարտութիւն։ Ի հարկ է, Մսթըր Տաֆի, մեր ուղիւ հաւասար չեն։

ԺԵԿ. — Տիկինը սիրում է քեզ:

ՍՎԵՆ. — Սիրում է, ի՞նձ, հա՛, հա՛, հա՛, ի՞նչ յիմարն ես, ժէկօ՛: Սիրում է, ես գիւեմ թէ նա ումն էսիրում և չէ դադարել սիրելուց այս հինգ տարիէ ի վեր: Օ՛, ի հարկէ, ես կարող էի հրամայել նրան սր մոռանայ այն անպիտանին, բայց իմ ինքնասիրութիւնը, ժէկօ՛, չի թոյլ տայայդ անելու...: Նո մինչեւ հիմա ինձ ողորմութիւն է տըւել, ես յիշար, ցնորուած, հիւանդ սէրը չեմ ուզում: Իսկ իսկական առողջ սիրով նա ինձ չի կարող սիրել: Տրիլին մոռանում է նրան սիրյն երբ քնած է: Ժէկօ՛, քառասուն տարի է ես զրել եմ հալածանք եւ արհամարանք, հասցրել եմ իւծ ամենաբարձր դադարնակէտին, ուր չէ հասել ո՛չ սի տաղանդ, բայց չի կարողացայ խեղդել իմ մէջ սէրը: Ես երբեք չեմ լինի այդ գարմօնիան, երբեք, ժէկօ՛, ես կը խելագարուեմ...:

ԺԵԿ. — Ուշքի ե՛կ, ժամանակ է սկսելու կոնցէրդը:

ՍՎԵՆ. — Ժէկօ՛ դու իմ միակ բարեկամն ես, դու ինձ սիրում ես, յիշի՛ր ժէկօ՛, երբ դու ման էիր դալիս ջուս թակը ձեռքիդ, անձրեւի տակ, կապտած ցրափց ու քաղցից, ես քեզ հանդիպեցի և մարդ շինեցի: Ես բաժանում եի քեզ հետ իմ վերջին պատառը...: Յիշի՛ր, ինչպէս լէյրցիկում երկուսս էլ դողում էինք պատուհանների տակ և ինչպէս մեզ կոպէկներ էին զցում...: Հիմա դու մեծ արթիսթ ես, այդ ես քեզ դարձրի արթիսթ, Սվէնդալիս, քո ուսուցիչը, քո ընկերը..., սովորերու ինձ, ի՞նչ անեմ, ինչպէս ստիպեմ նրան ինձ սիրել:

ԺԵԿ. — (Յուզուած) Արձակի՛ր նրան:

ՍՎԵՆ. — Արակեմ...:

ԺԵԿ. — Նա երբեք քեզ չի սիրելու ինչպէս ամուսու, բայց եթէ արձակես, կը սիրէ ինչպէս եղարը:

ՍՎԵՆ. — Հա՛, հա՛, հա՛... արձակե՞լ...: Ես գիտեմ թէ հիմա ամէնքը պատիւ կը համարեն իրանց համար լն-

դունիլ տիկին Սվէնդալիին ամէն միշնտանիքում, իսկ ե՞ս, ես ի՞նչ կը լինեմ...: Ո՛չ, ո՛չ, այդ մէկը չի կարելի, ժէկօ՛, ես աւելի շուտ կը խեղդեմ նրան իմ մատներովս, որոնք այնպէս զեղեցիկ նուազում են Շուբէրդի Ռօզամունտան: Ա՞..., ինչպէս ես կարծում..., ես քառասունը ութը տարեկան եմ, ժէկօ՛, նրանից քառասուն տարին անցել է մրցման, կոռուի մէջ, և հիմա ուզում ես որ մի շարժումով ոչնչացնե՞մ այդ քառասուն տարուայ աշխատանքը...: Ո՛չ, ժէկօ՛..., այդ արդէն շատ է...: Ես ոչինչ ունեմ, ժէկօ՛, առանց Տրիլիի, աւելի լաւ է մեռնել, միասին մեռնել, ժէկօ...: (Երաժշուրիւնը դադարում է):

ԺԵԿ. — Ֆրանկէլը վերջացրեց:

ՍՎԵՆ. — Լա՛ւ, թատրոնը լի՞քն է:

ԺԵԿ. — Այո՛, անցքերում տեղերը ծախուած են 50 ֆրանքով:

ՍՎԵՆ. — Ինչքա՞ն մուտք կայ:

ԺԵԿ. — 40,000 ֆրանք:

ՏԵՍԻԼ Դ. — ՆՈՅՆՔ ԵՒ ԾԱԽԱՅ

ԾԱԽԱՅ. — Տրիլին պատրաստ է: (Գնում է)

ՍՎԵՆ. — Լա՛ւ, ժէկօ՛, սկսի՛ր ուվիրդուան: (Ժէկօն գնում է):

ՍՎԵՆ. — (Մօտենում է սենեալին) Տրիլիի՛, դուքս ե՛կ:

ՏԵՍԻԼ Ե. — ՆՈՅՆՔ ԵՒ ՏՐԻԼԲԻ

ՏՐԻԼ. — (Երեւում է զարդախուցից):

ՍՎԵՆ. — (Մառային) Թո՞ղ մեզ: (Մառան հեռանում է).

ՏՐԻԼԻԻ՛. — Դու քնա՞ծ ես:

ՏՐԻԼ. — Այո՛...:

ՍՎԵՆ. — Մենք որտե՞ղ ենք:

ՏՐԻԼ. — Զը գիտեմ:

ՍՎԵՆ. — Դու կ'երգե՞ս բեմ-բօլս:

ՏՐԻԼ. — Հաւ։
ՍՎԵՆ. — Գնա՞նք։ (Քաղեղով կանգ և առնում) Սպասի՛ր...
 դու սիրո՞ւմ ես ինձ։
ՏՐԻԼ. — Այո՛։
ՍՎԵՆ. — Միմիայն ինձ։
ՏՐԻԼ. — Այո՛։
ՍՎԵՆ. — Հաստատի՛ր այդ։
ՏՐԻԼ. — (Չոփեղով նրա առաջ, համբուրում և ձեռքը)։
ՍՎԵՆ. — Այդպէս չէ, այդպէս չէ, բայց եթէ նա...
 (Տաշանուելուց յետոյ) Սրթնացի՛ր...։
ՏՐԻԼ. — (Ուժի և զայս վախցած) Մենք այս որտե՞ղ ենք,
 ի՞նչ աղմուկ է այդտեղ, երաժշտութիւնը նուագում է։
 Ա՛խ, ի՞նչպէս ցաւում է ամբողջ մարմինս..., ինչո՞ւ արթ-
 նացուցիր ինձ, ի՞նչպէս նեղուում եմ... ես չեմ կարող
 կանգնել (բռնում և գործիք) ցաւում է։
ՍՎԵՆ. — Էսի՛ր, դու յիշո՞ւմ ես Բիլլիին։
ՏՐԻԼ. — Բիլլի՞ն, նա ինձ համար մեռել է։
ՍՎԵՆ. — Իսկ եթէ... եթէ դուն հանդիպես նրան։
ՏՐԻԼ. — Ելի դու ինձ տանջում ես, ես քոնն եմ, մի-
 միայն քոնը, մի տանջեր զիս...։
ՍՎԵՆ. — Լա՛ւ, կը տեսնենք իսկոյն։ Ահա՛..., ահա՛ և
 նրանք, բոլորը միասին... եկել են և նոտել առաջին կար-
 գում։ Տրիլրի՛, ե՛կ այստեղ։ Նայի՛ր, այն ովքեր են այն-
 տեղ, առաջին կարգում։
ՏՐԻԼ. — Դա թատրոն է, ի՞նչքա՞ն ժողովուրդ կայ, ի՞նչ
 աղյուկ են անում։

ՍՎԵՆ. — Ո՞ւմ ես տեսնում... նայի՛ր այստեղ, առաջին
 կարգում, ո՞վ է նստած։

ՏՐԻԼ. — (Բացականցում է) Բիլլի՛, Բիլլի՛, և Տաֆին ու
 Սանթին, նա այս կողմն է նայում, որքան վիշտ կայ նը-
 րա դէմքին վրայ, իմ խեղճ Բիլլի, տա՛ր ինձ այստեղից, նա
 մեզ կը նկատի։

ՍՎԵՆ. — (Բոնեղով նրա ձեռքը) Դու սիրո՞ւմ ես նրան։
ՏՐԻԼ. — Թո՛ղ, ցաւում է։
ՍՎԵՆ. — (Կատաղած) Դու դեռ ես սիրում ես նրան.. նը-
 շանակում է իմ բոլոր ջանքերս ի զո՞ւր... ուրեմն դու եր-
 բեք, երբեք ինձ չես պատկանիւ։
ՏՐԻԼ. — Թո՛ղ ինձ, թո՛ղ։
ՍՎԵՆ. — Ո՛չ, այդ չի լինի... լա՛ւ է մեռնեմ.. ես ըս-
 պասում էի այդ բոլէին, ես զիտէի որ նա կը գար...։ Ես
 կը խեղճեմ քոյ մէջ վերջին յիշողութիւնը նրա մասին։
 (Բոնում և կոկորդից)։
ՏՐԻԼ. — Խղճա՛յ ինձ։
ԺԵԿ. — (Երեւում և վարագոյրի ետեւ, յառաջանարկ աշ-
 խատում և Տրիլրիին ազատէ) Թո՛ղ, Սվէնգալի, թո՛ղ (յետոյ
 առնում և սեղանի վրայ գտնուող դահակը եւ խում և Սվէն-
 գալիի վզին)։
ՍՎԵՆ. — (Թողեղով Տրիլրիին) Ա՛հ..., ժէկկօ՛, դու ինձ
 ապաննեցիր։
ՋԱՆ. — (Մանեղով) Ժողովուրդը աթոռները կոտրտում է...
 (յետ յաշուեղով) այս ի՞նչ է։
ՍՎԵՆ. — Ա՛ւա... ո՞չ մի խօսք... ես դեռ կենդանի եմ,
 ուրեմն և նա էլ է կենդանի, ոստիկանութեան ո՞չ մի խօսք
 (Զաներքիին արագ զնում է)։ Ո՞վ կայ այդտեղ, եկէ՛ք հո՛ս։

ՏԵՍԻԼ Զ. — ՆՈՅՆՔ ԵՒ ԾԱՌԱՆ

ԾԱՌԱՆ. — Ի՞նչ կայ, ի՞նչ էք կամննում։

ՍՎԵՆ. — Օգնի՛ր նրան։

ԾԱՌԱՆ. — Արի՞ւն...։

ՍՎԵՆ. — Օգնի՛ր նրան... ես ապակիով վիրաւորուեցի...
 ժէկկօ՛, առ'ւր ինձ թաշկինակդ, մօտեցի՛ր, մի վախենար։

ԺԷԿ.— (Թաշկինակը տալիս է):

ՍՎԵՆ.— (Վերթը սեղմելով) Դու շատ ծանր ձեռք ունես, ԺԷԿԿՕ', բայց Սվէնդալին էլ երկաթէ վիզ ունի, ջուր... բեր... : Ի՞նչ տաք է իմ արիւնը : Ի՞նչպէ՞ս է տիկին Սվէնդալին :

ԾԱԽԱՆ.— (Լալով) Աստուած իմ, նա ուշքի է գալիս :

ՍՎԵՆ.— Շփի՛ր նրա ճակատը, ԺԷԿԿՕ', ղանակը զցիր ձեռքիցդ քանի որ չեն տեսել... : Հիմնի, աչքերս մթնում է... : Այս քրիտանացու ապտակից էլ ծանր էր : ԺԷԿԿՕ', կապի՛ր, կապի՛ր գլուխս, շուտ, շուտ, դու քրիտոնեայ եւ ԺԷԿԿՕ', չես վախենար իմ արիւնից... :

ԺԷԿ.— (Գցելով դանակը կապում է Սվինգալիի վերթը):

ՖՐԱՆ.— (Դուրս վագելով վարագոյրի յետեւից) Խայտառակութիւնն... ժողովուրդը կատաղում է,

ՍՎԵՆ.— Դնա՛յ տեղդ, նուազիր Խօզամաւնտա..., մենք խոկոյն պատրաստ կը լինենք : (Ֆրանկի հեռանում է) Ի՞նչպէ՞ս է տիկինը, է'... :

ԾԱԽԱՆ.— Խեղճ, նա լալիս է..., դու կրկին նրան ծեծել ես..., Աստուած իմ... :

ՍՎԵՆ.— Լոհի՛ր, սատանայի ծնունդ, մեր երկուսի Ա.Ը. մեծ է և վրէժինդիր, մենք այդ կը հաստատենք : Միլա՛ր, ես շուտով քեզ կ'արձակեմ, շատ շուտ : Դէ՛, ԺԷԿԿՕ', զնա՛ իմ տեղս, դու կ'սկսեմ բեմ-բօլց, ես կը նստեմ վարագոյրի մօտ կը նայեմ ձեզ... : Դօններ-վեդր..: մենք այսօր, հիանաւ մ կ'երգենք բեմ-բօլց, այդպէս չէ՛..., ԺԷԿԿՕ', թող Անգլիա-թիք քառասուն հազար ֆրանքով լսեն թէ ինչպէ՞ս կ'երգենք բեմ-բօլց : Տեղդ գնա՞... : (Ժէկկօն զնում է) :

ԾԱԽԱՆ.— Նա նորից քննեց :

ՍՎԵՆ.— Աւելի լաւ է, բարձրացրո՛ւ նրան, այնպէս Այժմ գնա՞ :

ԾԱԽԱՆ.— Ա՛խ, աստուած իմ, աստուած իմ...

ՍՎԵՆ.— Տրիլրի՛, դու քնա՞ծ ես... :

ՏՐԻԼ.— Այո՞... :

ՍՎԵՆ.— Բաց աչքերդ...՝ գնա՛ բեմ : Երբ տեղդ գառարթնցի՛ր, և բեմ-բօլց երգի՛ր, այնպէս, ինչպէս երգում էիր անգլիացի նկարիչների մօտ :

ՏՐԻԼ.— Լաւ :

ՍՎԵՆ.— Այժմ գնա՛ :

ՎԱՐԱԳՈՅՐ



ԹԱՊԼՈ

ՏՐԻԼ. — (Ներս և մտնում հանդառք բայցերով):

ՑՐԱՆ. — Սկսեցէ՛ք, Տրիլըի՛, սկսեցէ՛ք....:

ՏՐԻԼ. — Ի՞նչ... ի՞նչ սկսեմ:

ԺԵԿ. — Երգե՛ւ, դէ՛, սկսեցէ՛ք:

ՏՐԻԼ. — Ե՞ս պիտի երգեմ: Ի՞նչո՞ւ... ես ի՞նչ պիտի եր-

գեմ...:

ԺԵԿ. — Բեմ-թօշ, բեմ-թօշ:

ՏՐԻԼ. — (Տանջրում է) Զեմ կարող, ցաւում է... ես զի-

աեմ, ես պարտաւոր եմ, ես մենակ կը փորձեմ, (ցոյց տալով

երաժիշտներին) դրանք ինձ խանդարում են, ես միշտ մենակ

եմ երգել:

ԺԵԿ. — Սվէնգալի՛, Սվէնգալի՛, օդնեցէ՛ք....:

ՏՐԻԼ. — Սվէնգալի՛, նա՞ էլ է այստեղ, պարոնա՛ք, ես

մեղաւոր չեմ, նրանք ինձ ստիպում են երգել, ես ո՛չ մը

չօթա չգիտեմ, արձակեցէ՛ք ինձ:

ՍՎԷՆ. — Հա՛, հա՛, հա՛, երգեցէ՛ք, ցոյց տուէ՛ք ձեր

բեղկանօն:

ԲԻԼ. — (Օքենակից անցնելով բեմ) Միթէ դուք չէ՞ք տես-

նում, այդ կիսը խելագար է:

ՏՐԻԼ. — (Դողլալով) Բիլլի՛....:

(Սվէնգալին դանակով յարձակում և Բիլից վրայ, բայց

Տագին ներս վագելով, բռնում է նրա թերլ.)

Ե. ԱՐԱՐՈՒԱԾ

(Առաջին վարագոյրի ժամանակը եւ ծաղիկներ):

ՏԵՍԻԼ Ա. — ՏԱՅԻ ԵՒ ՍԱՆԹԻ

ՍԱՆ. — (Նստած լայիս հ) Սատանան տանի ինձ, ինչո՞ւ
ես հեռացայ Սպանիայից, աւելի լաւ էր ես այնտեղ ամուս-
նանայի մի որ և է դօրքատօրի հետ: Մանրէ տեսնել թէ
ինչպէս նա օրից օր հանգում է: Ա՛հ, Տագի, Տագի, նա
կը մեռնի, անպատճառ կը մեռնի:

ՏԱԳԻ. — Դէ լուի՛ր գերջապէս, մենք ամենքս մեռնելու
ենք, հարցը նրանումն է ընէ երբ է լինելու այդ:

ՅԵՍԻԼ Բ. — ՆՈՅՆՔ ԵՒ ԺԵԿԿՈ

ՍԱՆ. — ԺԵԿԿՈ՛, այդ ո՞րտեղից:

ԺԵԿ. — Մի բարկանաք, ես պէտք է գայի:

ՏԱԳԻ. — Մտէ՛ք, մտէ՛ք:

ԺԵԿ. — Նա մեռնում է:

ՍԱՆ. — Դուք լսե՞լ էք:

ԺԵԿ. — Այո՛, ես ամէն օր հարցնում եմ դռնապանին,
ինձ նա է զրկել:

ՏԱԳԻ. — Նա բանտարկուած է:

ԺԵԿ. — Ո՛չ, մի կերպ ազատուեցաւ, նա ամրող շա-

րաթը ուշաթափ էր: Երէկ միայն ուշքի եկաւ... սկսեց լաւ,

երբ իմացաւ սր նա չկայ: Ամբողջ գիշերը լաց էր լինում...
և երբ ասացի որ Տրիլին մեռնում է՝ լոեց, հանգստացաւ:

Առաւոտեան ծառան օդնեց նրան հագնուելու, եւ նա հիմա

նստած է:

ՏԱՅԻ. — Ի՞նչ է ուզում նա:

ԺԵԿ. — Մի՛ բարկանաք, նա կամենում է ահսնել նրան, Թոյլտութիւն է խնդրում:

ՏԱՅԻ. — Դա՞ւ այստեղ, այդ անկարելի է:

ԺԵԿ. — Տրիլին մեռնում է:

ՍԱՆ. — (Մազերը խառնելով) Արդեօք մնաք իրաւունք ու չենք մերժելու:

ՏԱՅԻ. — Զէ որ դա կարող է վրդովել Տրիլիին, թուաւորել նրա վերջին բոպէները:

ԺԵԿ. — Վերջին բոպէն, ♀. Տափի:

ՍԱՆԹԻ. — Տափի, մենք իրաւունք չունենք նրան արգիւլու, չէ որ նա Տրիլիի ամուսինն է:

ՏԱՅԻ. — Գնա՛, ասա Տրիլիին. նախազգուշացրո՞ւ Բիլին, բայց զգոյշ եղի՛ր: Նստեցէ՞ք ծէկկօ, ես ուզում եմ ձեզ հետ խօսել, այժմ կարելի է բացարձակ խօսել: Դուք այս 5 տարի նրա հետ է՞ք եղել:

ԺԵԿ. — Այո՛:

ՏԱՅԻ. — Սվէնդալին նրան չարչարո՞ւմ էր:

ԺԵԿ. — Նա սաստիկ խանդում էր նրա անցեալի համար:

ՏԱՅԻ. — Հըմ...:

ԺԵԿ. — Տրիլին շատ էր տանջւում:

ՏԱՅԻ. — Զարմանալի է: Նա բոլորը յիշում է ի՞նչ որ պատահել է, մինչեւ Փարիզից փախչիլը: Բայց բաւական է յիշեցնել նրան համերգների յաջողութիւնները և նա նորից կարծես խելազարւում է և հաւատացնում է որ այդպէս բան չի եղել:

ԺԵԿ. — Ես ձեզ կը պատմեմ գաղտնիքը: Կային երկու Տրիլերի: Մէկը, որին դուք գիտէիք, նա երգել չգիտէք: Սվէնդալին խօսքով և հայեացքով նրան ուրիշ էր դարձընում: Ամէն մի դասից առաջ, նա քնացնում է Տրիլիին և ներշնչում երաժշտութիւնը: Ես լալիս էի, նրա տանջանք-

Ները տեսնելով: Մէնք մշակեցինք նրա ձայնի ամէն մի խաղը: Աստուած իմ, ների՛ր ինձ, ների՛ր....

ՏԱՅԻ. — Այդ սարսափելի է, Սվէնդալին ուզղակի նրան ապաննել է:

ԺԵԿ. — Իրան եւս սպաննեց, նրանց հօգիները միացել են:

ՍԱՆԹԻ. — (Մևելով) Բիլին հակառակուեց, բայց Տրիլիին համոզեց նրան: Երեւակայի՛ր, հէնց որ ասացի թէ Սվէնդալին ուզում է գալ այստեղ, նա կարծես թէ կաղղուրւեց: Նա իրան այնքան լաւ է զգում, որ ուզում է այստեղ գալ:

ԺԵԿ. — Ես կը գնամ:

ՍԱՆԹԻ. — Գնա՛, ԺԷԿԿՕ: (Ժեկկօն զնում է, յետոյ մտնում են Բիլի, Լեյսի Բեգոր եւ Տրիլլի):

ՏԱՅԻ. — Այսուղ բերէ՛ք, այսուղ յարմար կը լինի:

ՏՐԻԼ. — (Պառկելով բազմոցի վրայ) Ի՞նչպէս լաւ է այստեղ, մեր սիրելի արհեստանոցում, ամէն ինչ առաջուայ պէս է այստեղ: Ես կրկին տեսնում եմ ձեզ..., ինչպէս եքջանիկ եմ:

ՏԱՅԻ. — Մի երկու շաբաթից յետոյ կ'առողջանաք և ամենքս միասին կ'երթանք Վէրսայլ: Այժմ գարուն է, շագանակը արդէն կանաչել է, ա՞..., Տրիլի:

ՏՐԻԼ. — Այո՛, միասին, եթէ ես չմեռնեմ:

ՍԱՆ. — Մեռնիլ չենք թողնի, թոյլ չենք տայ:

ՏՐԻԼ. — Ես չեմ վախենում...: Թաղելը աւելի սարսափելի է, երբ որ ժաննօն մեռաւ, քիչ մնաց որ ես խելագորսւէի, իսկ իմ մեռնելուց ես չեմ վախենում:

Լ. ԲԻԳ. — Իմ խեղճ, թանկագին զաւակս: (Համբուրում է):

ՏՐԻԼ. — Որքան բարի էք ամենքդ էլ...: Ինչպէս լաւ կը լինի հիմա, քաղաքից դուրս, դաշտում: մանիշակը արդէն ծաղկել է (Աշմարելով իր զծուած ոտը) Բիլի՛, Բիլի՛, (ծափ տայով) իմ սուր, իմ սուր, ճիշտ չէ: Ահ, իմ խեղճ ոտքեր, ինչպէս նիհարել են...: Այժմ նրանց համար ժամը 5 ֆրանք չեն վճարեր, ա՞... ի՞նչ էք կարծում:

Լ. Բէդ. — Բաւական է սիրելիս, գուք այնպէս տաղանդ ունէք, այնպէս հարուստ էք:

ՏՐԻԼ. — Կրկի՞ն... գուք էլի՞ ուզում էք ասել որ եւ յայտնի երգչուհի եմ: Դուք ուզում էք ինձ խելագարութեան հասցնել: (Բիշին նշան և անում լեյտի Բեկորին, որ լրուկ):

Լ. Բէդ. — Խեղճ աղջիկս:

ՏՐԻԼ. — (անհանգիստ յիշելով) Ես միայն մի անգամ եմ եղել բեմի վրայ, Սվէնդալիի գոնցէրդում: Թէ դա երա՞զ էք...

ՏՈՅԻ. — Ի հարկէ երազ էք:

ՏՐԻԼ. — Իսկ Սվէնդալին շուտո՞վ կը գայ:

Լ. Բէդ. — Իսկոյն, իսկոյն կը գայ, խեղճ զաւակս:

ՏՐԻԼ. — Օ՛, որքան սիրավիր էք ռէպի ինձ, միսիս Բէդոթ, կամ մի գուցէ գուք մոռացել էք որ ես իրաւունք չունեմ պարծենալու իմ ամբիծ անգեռլով:

ԲԻԼ. — Տրիլիի, մի տանջէք մեզ, գուք բոլորը քաւեցիք ձեր տանջանքներով:

ՏՐԻԼ. — Ճիշտ է, ես տանջուել, չափազանց շատ եմ տանջուել, գուք ճշմարիս էք ասում: Կարծես թէ այժմ ես զարթնել եմ մի ծանր թմրութիւնից: Երազի պէս յիշում եմ, թէ ինչպէս մենք քաղաքից քաղաք էինք գնում: Մի ակընթարթի մէջ էր լինում այդ, իսկոյն եւ եթ Սվէնդալին աշքերը յառում էր ինձ վրայ եւ ես քնում էի: Փա՛ռք Աստղ ծոյ, այդ բոլորը վերջացաւ: Բայց գիտէ՞ք, ես շուտ եմ մեռանելու:

ԲԻԼ. — Ինչո՞ւ, ինչո՞ւ Տրիլիի:

ՏՐԻԼ. — Որովհետեւ ես ինձ շատ լտւ եմ զգում, իմ ոչ մի տեղս չի ցաւում: Հինգ տարուան մէջ, դա առաջին անգամն է:

ՏԱՅԻ. — Սիրելի՞ս, այդ նշանակում է որ գուք միշտ հիւանդ էք եղել, իսկ այժմ միայն առողջացել էք:

ԲԻԼ. — Ի հարկէ, մենք կը անզափոխուենք Անզիլա, մինչեւ որ գուք կ'ասողջանաք... մենք կ'ապրենք մեր կալուածներում, ծովի ափին:

Լ. Բէդ. — Այո՛, այո՛, ի հարկէ:

ՏՐԻԼ. — Իսկ Սվէնդալին, նա թող չի տար:

ԲԻԼ. — Մենք կը ստանանք ապահարզան:

ՏՐԻԼ. — Ապահարզան, մենք ամուսնացած չենք:

ԲԻԼ. — Աւելի լաւ, գուք ազատ էք:

ՏԱՅԻ. — Եւ մնում է մի միայն առողջանալ:

ԱԽՆ. — Ստանան տանի, ես Բիլիի խաչեղբայրը կը գառնամ:

ՏԱՅԻ. — Իսկ ես Տրիլիլին:

Լ. Բէդ. — Ես շատ բանում մեղաւոր եմ ձեր առաջ, ես, հիմա առանց տատանուելու, ձեզ իմ զաւակս կ'անուանեմ (Համբուրում հ):

ՏՐԻԼ. — Ահա՛ թէ ի՞նչ էի երազում, թէեւ ուշ բայց կատարուեց: Բիլի ես ձեր հարսնացուն եմ, ձեր մոյրը մեզ օրէննեց: Աստուած իմ, այս ի՞նչ երջանկութիւն: Ծնորհակալ եմ ձեզանից: Բայց այդ երջանկութիւնը երկար չի տեւեր: Ես կրկին անզամ վերագարձնում եմ ձեզ՝ ձեր որդուն: Վեցարձնում եմ, որովհետեւ այժմ նրան անկարող եմ վերցնել: Ուշ է, ուշ է:

ԲԻԼ. — (Հեկեկալով) Տրիլիլի, Տրիլիլի՛, ես կը խելագարուեմ:

ՏԵՍԻԼ Գ. — ՆՈՅՆՔ ԵՒ ՎԻՆԱՐ

ՎԻՆԱՐ. — (Մևում և ծաղկիներով). — Դեռ այս բոլորը չէ, այնտեղ գեռ բերում են ահագին քանակութեամբ ծաղիկներ: Ուր կը հրամայէք դնել:

ԱԽՆ. — Տո՛ւր այստեղ:

ՎԻՆԱՐ. — (Տաղիս և ծաղկիները սցցեսուներով) Ահա՛ եւ այցետոմսերը, բոլորն էլ Տիկին Սվէնդալիի առողջութիւնն են հարցնում:

ՏՐԻԼ. — Սվենդալի՞, նա եկե՞լ է: Այդ ճիշդ է որ նա կամեցել է զալ:

ԲԻԼ. — Ճիշտ է, ճիշտ է, սիրելի՞ս:

ՏՐԻԼ. — Երեւի ճիշտ է, ես զգում եմ թէ նա ինչպէս տանջում, ինչպէս ուզում է ինձ տեսնել: Օ՛, Բիլի, եթէ դուք իմանայիք թէ նա ի՞նչ սարսափելի սէր էր: Նա, ոչինչ էր խնայում ինձ համար: Նա շատ ընծաներ ունէր ժողովրդից իր կոնցերդների համար եւ այդ բոլորը ինձ էր տալիս: (Դարձեազ մենում է վիճար):

ՎԻՆԱՐ. — Ահա՛, կրկին բերում են եւ բերում: Եթէ երեք կառք լեցնէք, էլի կը մնայ:

ՏՐԻԼ. — Կրկին ծաղկներ: Դրէ՞ք, դրէ՞ք այստեղ..., վարդ, շոշան, ի՞նչ գեղեցիկ, անուշ հոտ ունեն...: Ա՛հ, Բիլի՛, Բիլի՛, ի՞նչպէս լաւ է կեանքը, ի՞նչպէս լաւ է այն աշխարհը, ուր կը բունեն այս ծաղկները: Յսգնել եմ:

ՏԱՅԻ. — Դուք շատ էք խօսում Տրիլրի՛, այդ ձեզ վնաս է:

ՎԻՆԱՐ. — Ես եմ, օրիորդ Տրիլրի՛, ես եմ: (Մանրիիմ) ձանաչեց:

ՏՐԻԼ. — Ինչպէս է ախորժակդ, սիրունիկս:

ՎԻՆԱՐ. — Շատ շնորհակալ եմ, առաջուայ պէս...: Իսկ դո՞ւք, դուք, մատմազէլ Տրիլրի՛, լաւ չէք... բոլորովին լաւ չէք:

ՏՐԻԼ. — Ո՛հ սատանան տանի, ես հիւանդացայ:

ՎԻՆԱՐ. — Ա՛յ ափսոս..., իսկ մենք որքան ուրախացանք..., երբ կարդացինք լրագիրներում...:

ՍՍՆ. — (Քաշելով նրա վիշը) Առ՛ւս:

ՏՐԻԼ. — Ի՞նչ, լրագիրներում ի՞նչ կայ:

ՎԻՆԱՐ. — Ա՛հ, այն բանի մասին էի ասում..., ինչպէս էր այդ ծաղկիկ տնունը:

ՏՐԻԼ. — Ա՛յ, ա՛յ, քեոի Վինար, դու կարծեմ քիչ կոնծել ես:

ՎԻՆԱՐ. — Բայց այդ վատից է, մատմազէլ Տրիլրի՛, վշտից, երեւակայեցէ՞ք, մենք ձեզ սպասում էինք, սպասում... եւ յանկարծ դուք...: Ա՛յ, մատմազէլ Տրիլրի՛, մեծ վնաս հասցրիք դուք մեր նկարիչներին: Այլեւս ձեր տեղը, ոչ ոքին չեն դաներ:

ՏՐԻԼ. — Է՛հ, սիրելիս, այժմ ես էլ բանի պէտք չեմ, նիհարել եմ..., այլեւս մարմնի առաջուայ թարմութիւնը չկայ:

ՎԻՆԱՐ. — Կ'առողջացնենք, կարգի կը բերենք:

ՏՐԻԼ. — (Յանկարծ վեց կենալով) Ա՛յ...:

ԲՈԼՈՐԸ. — (Վախեցած) Ի՞նչ էք անում, ի՞նչ:

ՏՐԻԼ. — Սվենդալին:

ԲԻԼ. — Որտե՞ղ է, որտե՞ղ էք տեսնաւմ:

ՏՐԻԼ. — Գալիս է, նա արդէն մօտ է..., ես զգում եմ: Ահա՛, նա սանդուխների վրայ է, մօտենում է, բաց է անում դուռը (Մտնում են Ժեկիկոն և Սվինգալին):

ՍՎԵՆ. — Ա՛, ինձ թոյլ են տուել զալ կնոջս մօտ, Ժեկ-կօ՛... թոյլ են տուել, ես կարո՞ղ եմ մանել...

ՏԱՅԻ. — Մտէ՞ք:

ՍՎԵՆ. — Ա՛... այս մարդը, հիմնիկ, նա թոյլ է տալիս Ժեկկօ՛..., արեմն կարելի է ա՞..., մանենք:

ՏԱՅԻ. — (Քայլ է անում, որ օգնէ Սվինգալին):

ՍՎԵՆ. — Մի խիեք ինձ..., ես միայն մի բոպէ..., ես կ'երթամ...:

ՏԱՅԻ. — Ես կամենում էի ձեզ օգնել...:

ՍՎԵՆ. — Ա՛, Ժեկկօ՛, ի՞նչ է ասում նա..., ես վատ եմ լսում... հիմնիկ, մի խիեք, խղճացէ՞ք ինձ: Ա՞... եսերաժիշտ եմ... ինձանից խլեցին բոլորը... ես կը զնամ, բացարի՞ր նրանց Ժեկկօ՛, որ ես կը զնամ, միայն մի անդամ նայեմ կը նոյն, եւ ես կը զնամ:

ԲԻԼ. — Սվենդալի, մօտեցէ՞ք, այստեղ չկան ո՛չ հակառակորդներ եւ ո՛չ ալ թշնամիերը...:

ՍՎԵՆ. — (Ցեցուելով) Ա՞վ է սա, ա՞... զիան, սա այն

մարդն է, որի երեսին ես թքեցի եւ որի փոխարէն նա խլեց ինձանից իմ բոլոր ունեցածը եւ հիմա բոլորը ներռում է: Հիմա միշտ... կա՞յ արգեօք աշխարհի երեսին արդարութիւնն Ակն ընդ ական, չնորհակալ եմ ձեզանից:

ՏՐԻԼ. — (Կանչում և կ) Սվէնգալի՛:

ՍՎԵՆ. — (Ցնցուեղով մօտենում է Տրիլրիին) Ժէկկօ՛, Ժէկկօ՛, երբ որ ջարդում են շան գլուխը, կատրում ոտքը եւ մէջքը, նա միայն կարողանում է սողալ, նա այլեւս վասակար չէ: Մարզիկ ունին սիրտ, իսկ չնե՞րը՝ համբերութիւն, ես չեմ գանգատում, ամէն բան ունի իր ժամանակը...: Ես երածիշտ եմ փշուած ջութակով, ես չեմ կարող այլեւս նուտղել..., միայն կարող եմ լայ, ծունկ չոքած եւ իմ արցունքների արժնիայի մէջ աւելի նուրբ եւ իսկական ներդաշնակութիւն կայ, քան թէ Շուրէրդի Ռոգաւունայի մէջ:

ՍԱՆ. — (Սվէնգալիին) Բարեկամ, հաւատայ որ քո դէմ ոչ ոք ոչինչ ունի:

ՍՎԵՆ. — Հաւատա՞լ... ո՛չ, Սվէնգալին մոռացել է հաւատաւ, բայց սովորել է լաց լինել: Ինձ սչինչ հարկաւոր չէ: (Չոյնում է Տրիլրի ոտքերին մօս, բոլորը զնում են բեմի խորը):

ՏՐԻԼ. — Խե՛ղճ, խե՛ղճ Սվէնգալի:

ՍՎԵՆ. — (Հետեկապով) Բոլորը, բոլորը ոչնչացաւ, բոլոր իմ անցեալ կեանքը, բոլորը կորաւ...: Երբ կ'անյետանայ, կը թոչի իմ բկլ-կանօն, ես ի՞նչ անեմ, ո՞ւր դիմեմ, ուժասպառ, ձնչուած, անյօյ, ո՞ւմ համար ապրեմ:

ՏՐԻԼ. — Ապրի՛ր նրանց համար, որոնք տանջւում են. թող քո տանջանքը հաշալի հնչիւն զառնայ մարդկանց համար, երջանկութիւն եւ խաղաղութիւն բերէ եւ երբ նրանք լաց լինեն քո նուազելուց, այն ժամանակ կը զգա՞ս որ բոլորը կորած չէ:

ՍՎԵՆ. — Ես նրանցից չեմ, որոնք կարող են իրանց մեղքերը քաւել զջումով: Այո՛, ես մեղաւոր եմ քո առաջ, ես քեզ շատ չարչարեցի, տանջեցի, սպանեցի: Եթէ դու մեռ-

նէիր ինձ մօտ, իմ ձեռքում, ես հանդիսան սրտով կը հնասեւէի քեզ: Բայց նրանք յափշտակեցին քեզ իմ ձեռքից: Ոսիծ եալնե՞ր, ի՞նչպէս են համարձակւում քեզ իրանցը համարել: Դու իմս ես, դու պիսի մեռնիս իմ կինս լինելով, գնա՞նք:

ՏՐԻԼ. — (Ճիզ մը կ'ընէ, յատց իր կենայ) Ես չեմ կարող վեր կենալ:

ՍՎԵՆ. — Ուրեմն զուրս արա՛ նրանց:

ՏՐԻԼ. — Սվէնգալի, մի զուրս անի նրանց իրամբք կը գնան: (Ուրախ կանչում է) Բիւլի՛ որտեղ երած... Լի՛ Բիլի՛. — (Մօտենալով) Ես այստեղ եմ:

ՏՐԻԼ. — Տու՛ք ձեր ձեռքը Սվէնգալիին: (Ենուուի հինա ձեռքը):

ՏԱՖԻ. — (Մօտենալով) Եթէ այդպէս է բրդեկամ, մահա եւ իմ ձեռքը, մի անգամ էլ հասցրու երեսիս եւ կը հաշուենք:

ՍԱՅԹԻ. — Սատանան տանի, իսկ ինձ մոռացա՞ք (ուկինում է Սվէնգալի ձեռքը):

ՏՐԻԼ. — Ինչպէս լաւ է...: Ամենքը այստեղ ինձ մօտեն եւ միմիանց հետ հաշու: Ինչպէս հինգ ապրի առաջ, մեռ ձեռքեցրի, հիմք էլ հաշուեցրի...: Թ՛, այժմ շատ լաւ չէ: Ժէկկօ՛, այդ ի՞նչ ես անս. մ այդ անկիւնում, ջութակի լարում: Սվէնգալի՛, իսկիր նրանց ջութակի արդեւ, ուառը բանով քիթն է որբում:

ՍԱՆ. — Բրագօ՛, Տրիլրին ուրախացաւ: Սատանան տանի, ո՞վ է ասում որ նա հիւանդ է: Մի շարաթից յետոյ մի լաւ երեկոյթ կը սարքենք, եւ ես նրա հետ կանգան կը պարեմ:

ՏՐԻԼ. — (Առոյ նևում է) Լաւ ժամանակ էր, յիշում ես Սվէնգալի, ես շիրմայի եսիւ կանգնած էի, իսկ դու նուազում էիր Ռոգանենան: Տափին իմանից նվարում էր՝ «արտասուքի աղբիւր» պատկերը, Սանթին գօրէստօր» հարանցուն, իսկ Բիւլին... Ա՛խ, որքա՞ն յիշողութիւններ կան»:

ՍԱՆԹԻ. — Եւ ինչո՞ւ այդ յիշողութիւնները նորից չի վերականգնել...: Դէ՛, ընկերներ, ի գործ, սկսենք մի մի էսկիզ նկարել: «Տրիւրին ծաղիկների մէջ»: Լաւ է, այնպէս չէ...:

ՏՐԻԼ. — Բրավօ՛, բրավօ՛, Սանթի՛, ես ռւզում եմ մի անգամ էլ ձեղ համար մօտէլ դառնալ: Դէ՛, գնացէ՛ք տեղերդ:

ՍԱՆ. — Բրավօ՛: (Պատրաստում է նկարել):

ՑԱՅԻ. — Հրաշալի է: (Պատրաստում է նկարել):

ՏՐԻԼ. — Իսկ թիւլի՞ն:

ԲԻԼ. — Ես չեմ կամենում: Բացի նրանից, կտաւ չկայ:

ՍԱՆ. — Վերցրո՞ւ ալպօմը: (Բիշին վերցնում է ալպօմը եւ նսում է): Բաւական է, այժմ ի գործ:

ՏՐԻԼ. — Սվէնդալի՛, մի անգամ էլ նուագիր ինձ համար Ռօգամունեան, գուցէ այժմ հասկանամ:

ՍՎԷՆ. — Ժէկկօ՛, օգնի՛ր ինձ, Տրիւրին խնդրում է Ռօգամունեան: Իմ խեղճ մատներս կոշտացել եւ դողում են...: Ինչպէս ես կարծում, Ժէկկօ՛, նրանք կարո՞ղ են նուագել Ռօգամունեան: Այդ Տրիւրին ցանկաւթիւնն է, կը փորձենք, Ժէկկօ՛: (Նուագում է):

ՏՐԻԼ. — Ամենքը իրանց տեղերումն են, այժմ շատ լաւ է, շատ լաւ: Ո՛, այժմ հս հասկանում եմ Ռօգամունեան...: Սվէնդալի՛, դու մեծ արթիսթ ես: Բոլոր անցեալր երազ էր... սարսափելի երազ... ամէն բան վերջանում է... հայրիկ... Ժաննո... Սվէնդալի, Սվէնդալի... (Աննկատելի կերպով մեռնում է: Լաւում է յանկարծ զանգի ձայն, եւ յանկարծ ընդհատում է):

ՍՎԷՆ. — Զանգահարում են... ի՞նչ է պատահել այնտեղ: (Նայում է պատուհանից) Ա՞... այդ ննջեցեալ են բերում մորդեք: Պատգարակները ներս են սողում դռներից (անհանդիս, կուրծքը շիկով): Ինչո՞ւ լուռ է...: Ա՞, Ժէկկօ՛, ես ինձ վատ եմ զգում, կարուեց այստեղ մի բան: Ինչպէ՞ս հանդարտ է եւ ինչպէս խաղաղ: (Մատով Տրիւրին ցոյց տարով) Տրիւրի՛...

ՍԱՆ. — Ի՞նչ է պատահել:

ՏՐԻԼ. — (Մօտենալով Տրիւրիին) ԽԵՂՃ, նա արդէն մեռած է: ԲԻԼ. — ՏՐԻԼՐԻ՛...:

ՍՎԷՆ. — (Ընկենում է գետին եւ սողալով մօտենում է Տրիւրիին) Բէյ-կանուն թռաւ, լարերը կարում են այստեղ մին միւսի ետեւից... օդ չկայ, խեղդում եմ... մութ է... ՏՐԻԼ...: (Մեռնում է):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ՎԵՐԹԵՐ

Հ Յ Ա Խ Ա Տ Ա Խ Ա Տ Ա Խ
(ՄԻՐԱՅԻՆ ՎԵՐ)

ՎԵՐԻՆ Հ Խ Ա Խ Ա Տ Ա Խ Ա Տ Ա Խ
ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ
ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ ՎԵՐ



ՎԵՐԵՐ

(Այն աշխարհին մեջ, երբ ՎԵՐԹԵՐԸ կը գրեր)

2625
2626
2627
2628
2629
2630
2631



2013

